

613. 8

R - 91

1185

3533

612.89		1003 11525
F		
613.89	R	1003 11525
C-91	B-21	11525
	new	
	1003	
935	935	

2010

300
1149-FOK

1334

2002

۴۷

1334

613.8

F-91

Բժ. Ա. ԲՈՒԴՐՈՒՆԵԱՆ



ԻՆՉ Է ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆԸ



$$\begin{array}{r} 1003 \\ \hline 11325 \end{array}$$



Ա-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

ՏՊԱՐԱՆ «ՏՐՈՒԴ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1900

16273



Дозволено цензурою. С.-Петербургъ, 12 Октября 1899 года.

«Ամուսնացողների հոգեոր ու մարմնաւոր առողջութիւնը—նոցա սեպհական երջանկութեան և առողջ սերունդ ունենալու գլխաւոր հիմնաբարն է»:

«Բնական ընտրութեան այս օրէնքի խախտման հետեանքները սարսափելի են թէ՛ ձնողների և թէ նոցա որդոց համար»:

«Կըգայ ժամանակ, երբ սէրը բոլոր մահկանացուների կեանքի փրկարար բարասան կըդառնայ, ասոուածային ճառագայթ՝ որ կըզարդարէ և կըզուարթացնէ մարդկային կեանքի գժուարին ճանապարհը»:

«Միայն սէրն է կեանքի շունչը, նա է տակս մնունդ ու բովանդակութիւն մեր գոյութեան և բիւրապատիկ աւելի արժէ, քան կենսական մնուիութիւնը և ոչնչութիւնը Ամուսնական կապը, որ հիմնուած չէ սիրոյ վրայ, յանցաւոր կապ է, ինչպիսի իրաւունքներով էլ սա սըստագործուած լինի»:

«Աէրը—աշխարհիս հոգին է»:

ՅԱԹԱԶԱԲԱՆ

Ճառանգականութեան օրէնքի գոյութիւնը մեծ
պատասխանապւութեան է ենթարկում ծնողներին ի-
րանց որդոց նկատմամբ:

Ճառանգականութեան շնորհիւ երեխաները նոյն
ֆիզիքական ու հոգեկան յատկութիւններն են ունե-
նում, ինչ որ նոցա ծնողները:

Վուանց ծնողների մարմնական առողջութեան՝ ե-
րեխաները զըկուած կրիլնին իրանց կեանքին անհրա-
ժեշտ պայմաններից, և եթէ անհրաժեշտ է սերունդ
պահպանել պէտք է աչքի առաջ ունենալ ոչ միայն
ապագայ սերնդի առողջութիւնը, այլ և հոգ տանել
սեպհական առողջութեան:

Որ և է սերնդի բարեկեցութիւն վերին աստի-
ճանի սերտ կապուած է անհատի բարեկեցութեան հետ:
Աեպհական առողջութեան մասին շատ կամ սակաւ հոգս
տանելը մեծ նշանակութիւն ունի ապագայ սերնդի ա-
ռողջութեան նկատմամբ. ծնողների թեթևամտութիւնը
այս կէտի վերաբերմամբ ուղղակի վեասումէ նոցա զա-
ւակներին:

Վնհատի այն ամէն վարմունքը, որ ֆիզիքական
առողջութիւնն է խորտակում և կամ վեասում հոգե-

կան յատկութիւններին, միանգամայն տկարացնում է ապագայ սերնդի բնական յատկութիւնները:

Չնայելով որ մարդիկ միշտ նկատում են երեխաների իրանց հօրն ու մօրը բերած նմանութիւնը և շարունակ տեսնում ֆիզիքական և հոգեկան պակասութիւնների ժառանգաբար որդոց որդի անցնելը, բայց և այնպէս ուշադրութեան չեն աւնում այդ երեղյթի իսկական պատճառը—իրանց վարքը:

Կոքա չեն կամենում և կամ անկարող են մտածել, որ եթէ մարմի կազմուածքը ժառանգաբար անցնումէ, վարքն ու բարքն ես, որ վնասումէ կամ նպաստում նրա լաւանալուն, նոյնպէս երեխաների և թոռների թէ՛ ֆիզիքական և թէ հոգեկան կեանքի վերայ թողնումէ լաւ կամ վատ ազդեցութիւն:

Տակաւին չկայ այն ճշմարիտ գիտակցութիւնը, թէ մարմի և հոգու յատկութիւնների չարաշար գործածութիւնը մեծապէս վնասումէ մեր գործարանին, և այդ վնասը անցնումէ յաջորդ սերնդին:

Չկայ այն ճշմարիտ հասկացողութիւնը, թէ ամեն մարդ պէտք է այնպիսի կեանք վարէ, որ կազմուածքի բոլոր մասերն իրանց բնական դրութեան մէջ մնան:

Ի նկատի առնելով այսպիսի դէպքերի հեռաւոր հետեւանքները, մեզանից պահանջվումէ, որ միշտ ուշք դարձնենք մեր առողջութեան վերայ:

Խւրաքանչեւր ոք իւր առողջութիւնը պէտք է մի ժառանգական գոյք համարէ, որ իւր կողմից պարտաւոր է յանձնել յաջորդ սերնդին, ինչպէս որ ստացաւ, և կամ աւելի լաւ վիճակի մէջ:

Ճշմարիտ է, պատահում է երբեմն, որ մարմնական թուլութիւն կամ հիւանդութիւններ և առհասարակ զանազան ֆիզիքական և հոգեկան պակասութիւն-

ներ միշտ ուղղակի ժառանգաբար չեն անցնում, բայց այսպիսի դէպքերը ընդհանուր օրէնքի ոյժը չեն խախտում, և մեզ ընաւ խարելու չեն:

Չխօսելով արբեցութեան, թոքախտ—բարակացաւի և մի քանի ուրիշ հիւանդութիւնների ժառանգաբար անցնելու մասին, յիշենք յատկապէս սիփիլիսն ու սուսունակը (տրիպեր = միզուկի բորբոքումն), որոնց հետեւանքները տարիներ են տևում, եթէ կատարելապէս բուժուած չեն լինում:

Կ'նչպիսի խնդութեամբ են մտնում նորատի օրիորդներն ամուսնութեան կախարդական աշխարհը, և ի'նչպիսի հիւաթափութիւն է սպասում նրանց:

Եշրջանիկ և ուրախ կեանքի փոխանակ—նիշարութիւն, դժգունութիւն, գլխացաւ, և որ ամենից ցաւալին է—անպտղութիւն, անզաւակութիւն:

Այս գրքոյիկի նախատակը պիտի լինի խօսել բժըշկական տեսակէտից անառակութեան վատթար հետեւանքների մասին, (որ դժբախտաբար սկսել է մուտ գործել մեր նահապետական ընտանիքներում), և տարածել որոշ չափով պայծառ գաղափար սեռական յարաբերութեան վերայ:



Սերկայ ժամանակներում ամուսնական կապերն
ահազին մեծամասնութեամբ անյաջող են լինում,
և այդ երեսյթը նկատվում է հասարակութեան
բոլոր՝ թէ՛ բարձր և թէ ստորին գասակարգերի մէջ:
Սովորաբար պսակելու ժամանակ աշքաթող
են անում ամուսնացողների հոգեկան և մարմա-
կան յատկութիւնների ներդաշնակութիւնը. այն
ինչ այս հանդամանքը ամուսնական երջանիկ կեան-
քի անհրաժեշտ պայմանն է կազմում:

Սյս մէծ խնդրի մէջ զլիսաւոր ուշադրութիւ-
նը զրաւում է միմիայն տնտեսական կողմը. առա-
ջին տեղը բռնում է նիւթական հաշիւը, որ միան-
գամայն միւս պայմանները մոռացնել է տալիս:
Ճշմարիտ է պատահում են ամուսնութիւն-
ներ առանց որ և է շահասիրական նպատակների,
բայց գժբախտաբար այսպիսի երեսյթներ հապուա-
գէալ են:

Յայտնի է թէ ինչպէս է կատարվում ամուս-
նութիւնը զիւղացիների մէջ. հարսնացուի և երի-
տասարդի ծնողներն իրանք իրանց մէջ համաձայ-
նութիւն են կայացնում, խմում են, պայմանաւոր-
ում և —դորձը վերջացած է:

Արդեօք ապագայ ամուսիններն միմեանց դժուր
են դալիս, առողջ են, համապատասխան են միմեանց
—այդ բոլորի մասին ծնողները չեն էլ հարցնում
նրանց:

Ի միջե այլոց՝ գիւղացի ծնողները յաձախ
իրանց որդոց ամուսնութիւնը համարում են մի
միջոց տան համար մի նոր աշխատաւոր ձեռք
ստանալու:

Գիւղացիների համար ամուսնական գործում
մեծ դեր են խաղում տնտեսական հաշիւները:

Բնականաբար ամուսնանալու այս եղանակը
մեծապէս նպաստումէ անբարոյականութեան տա-
րածման: Համարեայ նշնն է ամուսնութեան ձեր
և քաղաքներում:

Այստեղ էլ նշնպէս առաջին տեղը բռնումէ
տնտեսական հաշիւրը: Հարսնացուների մայրերը բո-
լոր ուժով աշխատումէն ամուսնացնել իրանց աղ-
ջեկներին կամ, ինչպէս սովորաբար ասումէն, «աե-
ղաւորել»:

Վաճառականների որդիքն, ինչպէս և նոցա
ծնողները, համարում են ամուսնութիւնը մի նոր
միջոց, որով կարող են իրանց կապիտալը շատա-
ցնել և կամ քայլայուած գործերը շտկել:

Հարուստ աղջեկներն՝ ընդհանրապէս չզար-
գացած՝ անպատճառ ուղումէն բժշկի կամ ինժե-
ների կին դառնալ և կամ իշխանի. նշն միտում-
ներով են առաջնորդվում և երիտասարդները: Վեր-
ջապէս աստիճանաւորական շրջանի փեսացուն
ընտրելով իր համար հարսնացու՝ աչքի առաջ է

ունենում թէ որքան զօրեղ հովանաւոր կարող է
ունենալ ապագայ կնոջ ծնողների և աղջականնե-
րի միջոցով:

Այսպէս՝ ինչ դասակարգ էլ որ վերցնենք, ա-
մէն տեղ մի և նոյնն է. նոյն շահասիրական նպա-
տակները, միւնոյն կողմակի հաշիւները:

Բայց մայրերն՝ որ եռանդուն կերպով աշխա-
տումէն իրանց աղջեկները տեղաւորելու, մի բան
միայն՝ և այն էլ ամենապիխաւորը, մոռանումէն
—նոցա երջանկութիւնն ու առողջութիւնը:

Թող փեսացուն շնորհալի տեսք ունենայ,
թող նա լինի որոշ և բաւարար պաշտօնի տէր՝
հերիք է, վերջացաւ:

Արդեօք փեսացուն ունի՞ որ և է հիւանդու-
թիւն, երբ և իցէ հիւանդացել է, առողջ ծնող-
ներից է թէ ոչ կարող է ներկայացնել վկայական
մասնագէտ բժշկից իւր առողջութեան մասին,
այս բոլորը դժբախտաբար աչքաթող են անում
մայրերը, միայն թէ իրանց աղջեկը ամուսնանայ
ապահովուած մարդու հետ:

Անցնումէ ահա մի քանի ժամանակ և կա-
տարեալ հիասթափութիւն. նորատի կինը նիշա-
րումէ, դեղնումէ, զգումէ ցաւեր փորի ներքին մա-
սում: զառնումէ անպատուղ և կամ վիժումէ: Բանը
շատ հեշտ է պարզվում: նա ի միջի այլոց վա-
րակուել է մարդուց սուսունակով (տրիպեր):

Տղամարդը մինչև ամուսնանալը ոչ միայն ա-
նարատ չէ եղել այլ և արիպեր է ունեցել որի
սուր նշանները թէ և անցել են, բայց մնացել է

լսրոնիկական ձեր, և նա կատարելապէս չբժշկուած՝
ամուսնացել և վարակել է իւր կնոջ:

Փառք Աստուծոյ որ ուրիշ հիւանդութիւն
չունէր:

Ամուսնութիւնների մեծ մասի հիմքը ներ-
կայում, ինչպէս ասացինք, տնտեսական հաշե-
ներն են:

Մի ժամանակ Պետերբուրգում ամուսնու-
թիւնները կատարվումէին լրագրական յայտարա-
րութիւնների միջոցով:

Ամուսնանալ կամեցողը լրագրերում յայտա-
րարութիւն էր տալիս՝ հաղորդելով այն պայման-
ները, որոնց հիման վերայ աղջիկը կարող էր տ-
մուսնանալ իւր հետ:

Սակայն ոստիկանութիւնը շուտով արգելեց
այդ տեսակ յայտարարութիւնների տպագրու-
թիւնը:

Որքան դէպքեր կարելի է յիշատակել երբ
երիտասարդները՝ հարուստ օժիտ ստանալու դի-
տաւորութեամբ, ամուսնանալու ժամանակ խա-
րել են իրանց հարսնացուներին:

Բայց օրիորդներն էլ մեծ մասամբ ամուսնու-
թեան մէջ տեսնումէն միայն մի շարք զուար-
ճութիւններ, և այսպիսի հայեացը ունենալով բո-
լորովին չեն պատրաստվում իրանց զլսաւոր գերի,
այն է՝ մայր, դաստիարակ և տղամարդի ընկեր լե-
նելու համար:

Եթէ այժմեան ամուսնանալու սովորական պայ-
մանների վնասակար և անբարդյականացուցիչ աղ-

դեցութիւնն որոշ չափով երեան է գալիս մինչև
կատարուելը, նոյնը առաւել սաստիկ կերպով ար-
տայայտվումէ ամուսնութիւնից յետոյ:

Ի՞նչ երջանկութիւն կարելի է սպասել այն
ամուսնութիւնից, որ հիմնուած է միայն շահասի-
րական հաշեւների վերայ. այստեղ երջանիկ կեանքի
և ամուսնացողների առողջութեան ու նոյա երե-
խանների մասին ոչ մի խօսք չի էլ կարող լինել:

Թէ ի՞նչ ազգեցութիւն ունի մի այդպիսի ա-
մուսնութիւն անհատական կեանքի վերայ՝ շատ
պարզ է. ծագումէն տանջանքներով լի ընտանե-
կան երկպառակութիւններ և պատճառ դառնում
անառակութեան:

Լաւ, երջանիկ ընտանիքը յառաջադիմու-
թեան ամենազլիսաւոր և անհրաժեշտ պայմանն է.
իսկ այն ընտանիքը, որի մէջ թագաւորումէ ան-
համաձայնութիւն, կոիւ, սաստիկ կաշկանդում է
անհատի թէ մատաւոր և թէ բարոյական կատա-
րելագործութիւնը:

Զուր չէ որ շատերն ընտանեկան պայմանի ան-
յաջող կեանքից գրգուած՝ դիմում են հարբեցո-
ղութեան, ինքնասպանութեան և թունաւորում են
իրանց կամ միմեանց:

Եթէ ամուսնացողներն աչքի առաջ չունենան
բնութեան պահանջները, իրենց ֆիզիքական, մտա-
ւոր և բարոյական վիճակները, նոքա երջանիկ չեն
կարող լինել և այս շատ վատ հետեանքներ ա-
ռաջ կըբերէ թէ ապագայ սերնդի և թէ ամուս-
նացողների անձնական կեանքի համար:

Հասկանալի է, թէ բազմաթիւ նիշար, թցլ խլախտով (զօլտուխա) վարակուած և հիւանդու երեխաներ այդպիսի ամուսնութիւնների շնորհիւ, որոնք համաձայն չեն բնական օրէնքներին, մեծ մասամբ մեռնում են:

Սյժմ միքանի խօսք ասենք, թէ ի՞նչ վկայութիւն են տալիս հոգեբանութեան, առողջապահութեան, վիճակագրութեան ցուցումները՝ երջանիկ ընտանեկան կեանքի և առողջ սերնդի մասին:

Բ.

Ամուսնական երջանկութիւնը սերտ կապուած է ամուսնացողների հասակի հետ:

Տղամարդը պէտք է լինի ոչպակաս 25—28 տարուց, իսկ կինը՝ 20—22 տարեկան:

Վաղաժամ ամուսնութիւնը թէ կնոջ և թէ տղամարդի առողջութիւնը սասաիկ քայլքայում է:

Բազմաթիւ ջղային հիւանդութիւններ անխուսափելի սեպհականութիւն են այն կանանց, որոնք ամուսնացել են անհամապատասխան հասակում:

Բոլորովին երիտասարդ ծնողների որդիքը լեռում են հիւանդու, սակաւարիւն, կարճակեաց և առհասարակ զանազան հիւանդութիւնների ենթակայ, և երեկ չեն պատահում այնպիսի ամրակալմ երեխաներ՝ ինչպէս կատարելապէս համապատասխան հասակի ծնողների երեխաներն են լինում:

Կոռուել օրիորդների վաղահաս ամուսնութեան դէմ, մի չարիք՝ որ այլասերումէ մեր ազգը, շատ դժուար է. այդ նապատակին հասնելու համար պէտք է մեծ բարեփոխութիւններ մտցնել ժողովրդի դաստիարակութեան, կրթութեան և տնտեսական կեանքի մէջ: Սյս կէտում մասամբ մեղանցում է նաև մեր հոգեսորականութիւնը: Բայց բարեփոխութիւններ այն ժամանակ միայն կըմտնեն, երբ մարդիկ հասկանան առողջապահական կանոնների նշանակութիւնը կեանքի համար:

Միմիայն այդ ժամանակ կանյայտանան վաղաժամ ամուսնութիւնները, որոնք վնասում են թէ՛ անհատի և թէ նորան յաջորդող սերնդին: Ինչպէս արդէն ասացինք, առողջութիւնը կարող է քայլքայուել վաղաժամ ամուսնութիւնից աւելի շուտ՝ քան թէ երբ ամուսնութիւնը կատարվում է հասուն հասակում: Սյստեղ ոչ մի կասկած կարող չէ լինել:

Երբ սեռական յարաբերութիւնը պատահում է օրգանիզմի չկաղմակերպուած ժամանակ, ոչ միայն օրգանիզմի զարգացման առաջն է առնում, այլ և զանազան հիւանդութիւնների ընդունակ է զարձնում, և միանգամայն առաջ է բերում զանազան ֆիզիքական պակասութիւններ:

Ահա ինչ է ասում վաղաժամ սեռական յարաբերութիւնների հետեանքների մասին յայտնի պրօֆեսօր Տառնովսկին, «վաղաժամ սեռական յարաբերութիւնների վատ ազգեցութիւնն ակնյայտնի երեսում է հասակի փոքրանալուն վերայ»:

«Այսպէս մինչև արբունքի հասնելը հասակի աձեցումը քաղաքի բնակիչների մէջ՝ թէ՛ գործարաններում աշխատողների և չաշխատողների և թէ՛ բարեկեցութեան միանման պայմաններում ապրողների մէջ՝ ոչինչով չի զանազանվում:

«Բայց սեռական հասունութեան ժամանակ գործարաններում աշխատողների հասակի աճեցողութիւնը յետ է մնում քաղաքի միւս բնակիչների հասակից՝ որոնք չեն աշխատում գործարաններում, ուր վաղաժամ սեռական յարաբերութիւններիտ առ վաղաժամ սովորական երեսյթ է:

«Հասակի կարգացման հետ ամբողջ մարմնի զարգացումը չի հասնիլ այն համաշափութեան, որ պէտք է ունենայ կանոնաւոր կազմուածքը. Ականունքների ուժը և օրդանիզմի տոկունութիւնը համեմատաբար աւելի քիչ է զարգացած լինում:

«Վերջապէս՝ վաղաժամ յարաբերութեան հետեւանքը լինում է միշտ սեռական գործունէութեան արագ թուլանալը և ժամանակից առաջ դադարեն, և այս այնքան շուտ է առաջ դալիս, որքան վաղ հասակից է սկսուել սեռական յարաբերութիւնը և որքան աւելի չարաչար է գործադրուել»:

9.

Կասկած չկայ թէ հարսն ու փեսան միայն
այն ժամանակ կարող են քիչ թէ շատ յոյս ու-
նենալ ապագայ ամուսնական երջանիկ կեանքի,

Նըր պատկից առաջ ունենան պարզ որոշ մասնան և բաւականին հաստատութեան ամենալավագոյն դրույթին:

Այս պայմանն անհրաժեշտ է ամուսնական
երջանկութեան համար: Մարդն ու կինը անպատ-
ճառ պէտք է ունենան միանման ընդհանուր զար-
գացում, միանման պարզ հայեացք շրջապատող ի-
րականութեան վերայ, հաւասար իրաւունք աշխա-
տելու, քանի որ երեխաներ ըունին, և հաւասար
իրաւունք մարդկանցից յարգանք վայելելու:

Ա.մենաերջանիկ ամուսնութիւնն այն է, որը
հիմնուած է սիրոյ վերայ: Բայց պատահում է որ
սիրոյ վերայ հիմնուած ամուսնութիւնն ընտանե-
կան երջանսկութիւն առաջ չի բերում, որովհետեւ
նրա հիմքը խսկապէս եղել է միակողմանի զգա-
ցում ամենաստոր ձգտութիւնների հետ միասին...

ինչքան մարդս կանոնաւոր, ներդաշնակ կրթութիւն է ստայել, այնքան էլ նրա սէրը պահանջում է բոլոր հոգեկան և ֆիզիքական յատկութիւնների որոշ զարդարութիւն ու զրգութեա:

Եւ եթէ այդ կատարուի, այն ժամանակ սէ-
րը լինում է կատարեալ, ամբողջացած և բազ-
մակողմանի:

Նա դառնում է, և այդ մեջ նշանակութիւն
ունի, մի թափանցող զգացում, որին օտար է
միակողմանի զգացումը:

Այսպիսի սիրով յափշտակուած անձը չի բաւականանում միմիայն իր սիրածի գեղանի կողմերով. նա որոնում է նրա բոլոր արժանիքները,

Նրա յատկութիւնները, և ապահով կրլինի թէ կարող չէ զբաւուել մի ուրիշ անձով իւր կեանքը կապել մի այլ էակի հետ, որ ապադային՝ առաւել մօտ ձանաչելով, կարող չէ իրան գոհացնել:

Սիրոյ վերայ հիմնուած ամուսնութեան ազգեցութիւնը սերնդի վերայ աւելի բարեյածող է, քան թէ այն ամուսնութիւնը, որ հիմնուած է գծուծ հաշեւների վերայ, կամ թէ կատարուել է առանց փոխադարձ համակրութեան:

Իրողութիւն է, որ սիրոյ վերայ հիմնուած ամուսնութիւնից ծնուած երեխաներն աւելի առողջ, գործունեայ և երկարակեաց են լինում, քան թէ նոքա, որոնք ծնուած են ոչ փոխադարձ սիրով, այլ շահի դիտութներով կապուած ամուսնութիւնից:

Այն ամուսնութիւնը՝ որ հիմնուած է դանազան շահասիրական դիտութների վերայ, ոչ միայն չի պարզեւում անձնական երջանկութիւն, այլ և տալիս է վատ սերունդ, այդպիսի ամուսնութիւնից առաջանում են թուլակաղմ երեխաներ, յաճախ նոյն իսկ հիւանդոտ. նրանց մտաւոր կարողութիւնը շատ աննախանձելի է լինում:

Այս բոլորը ցցյց է տալիս սիրոյ վերայ հիմնուած ամուսնութեան առաւելութիւնները. միայն նաև կարող է տալ ամուսիններին անձնական երջանկութիւն, իսկ նոյն սերնդին առողջութիւն և հոգեկան դեղեցիկ յատկութիւններ:

Ապա ուրեմն սիրոյ վերականդնումն իւր բոլոր կողմերով՝ միակ միջոցն է ընտանիքը վերա-

կազմելու և հասնելու իդէալական ընտանեկան կեանքին, նրա յարատելութեան և աւելի ու աւելի բարւոքուելուն:

Միայն սէրը մեզ կրտայ բնական, ազատ և համահաւասար ամուսնութիւն, աւելի կատարեալ երջանկութիւն. նա կրստեղծէ մարդիկ, որոնք կը մարժնացնեն իրանց մեջ բնաւորութեան ամենաւշաւ յատկութիւնները, և կրլինին զրաւական ապագայ սերնդի աւելի կատարելագործուելուն:

Զպէաք է մոռանալ և այն՝ որ երեխաներն իրանց ծնողներից ստանում են միայն լաւ կամ վատ յատկութիւնների սերմեր, որոնք կարօտ են ապագայ զարգացման:

Այս գերը պէտք է կատարէ գաստիարակութիւնը. նա պէտք է զարգացնէ երեխայի լաւ յատկութիւնները, իսկ ոչչացնէ վատերը:

Այս գժուար գործը ամբողջապէս պէտք է կատարեն ծնողները: Նա կարող է բաւարար կերպով կատարուել միայն այն ծնողների ձեռքով, որոնք անձնական երջանիկ կեանք ունին: Առանց այս պայմաննին՝ երեխաների կանոնաւոր կրթութիւնը զլուխ չի գալ:

Կանոնաւոր գաստիարակութիւնը՝ որ համապատասխան է երեխայի անշատական յատկութիւններին և այն օրէնքներին, որ մշակել են հոգեբանութիւնն ու միւս գիտութիւնները, կարող է մի որոշ չափով տկարացնել և անզօր իսկ դարձնել ժառանգական պակասութիւնները:

Իսկ ընդհակառակը՝ վատ գաստիարակութիւ-

Նը զօրայնումէ երեխայի վաս յատկութիւնները,
և ոչնչացնում լաւ կողմերը:

Երբ ամուսնական կեանքը լի է անընդհատ
վէճերով և առհասարակ անձնական կոիւներով,
այն ժամանակ իշարէ մնասվում է և երեխաների
դաստիարակութիւնը:

Սյսպիսի անյաջող ամուսնական կեանք սո-
վորաբար պատահում է շահասիրական նպատա-
կով ամուսնացողների մէջ, կամ երբ առաջնոր-
դում է միակողմանի զգայական սէրը:

Սյսպէս ուրեմն՝ շահասիրական նպատակով
եղած ամուսնութիւնները մնասակար են երկու
ահսակէտից,—նոքա առաջացնում են ֆիզիքական
և հոգեկան վաս յատկութիւններով օժտուած սե-
րունի, և—շնորհիւ անբաւարար դաստիարակու-
թեան աւելի զարգացնում են նոցա բնածին պա-
կասութիւնները:

Մեր ժամանակում տղամարդկանց է պատկա-
նում ամուսնութեան մէջ ներգործական գեր խա-
ղալը, իսկ կանայք ոչ մի գեր չեն խաղում:

Սյս բանին վկայ է և այն պատմական ըն-
դունուած սովորութիւնը՝ որ միայն տղամարդիկ
կարող են ամուսնանալու առաջարկութիւն անել
և ոչ թէ կանայք. բայց տեղն է ասել որ կնոջ և
մարդու հաւասար դաստիարակութիւնը և հաւ-
սար իրաւունքները կարող են վերջ դնել այս հնա-
ցած սովորութեան....

Բայցի դրանից կնոջ կախումն ունենալը, յա-
ձախ նոյն իսկ անօգնական և նիւթականապէս

նեղ զրութիւնը նրան ստիպում են ամուսնանա-
լու ժամանակ աչքաթող անել ամուսնական եր-
ջանիկ կեանքի զլսաւոր պայմաններից շատերը:

Սպա ուրեմն՝ ամուսնական երջանկութիւնն
աւելի կախումն ունի տղամարդկուց, քան թէ կնո-
ջեց տղամարդկանց փշացնում է պոռնկութիւնը
և միջավայրը. նոքա որոնում են հարուստ հարս-
նացուներ, և իրանք էլ ամուսնանալու առաջար-
կութիւն են անում:

Կեանքի ներկայ պայմանները սիրոյ վերայ
հիմնուած ամուսնութեան բոլորովին չեն նպաստում:

Ներկայ դաստիարակութիւնը, կրթութիւնը,
ապականուած միջավայրը և պոռնկութիւնը—այս
բոլորը փշացնում է իսկական սիրոյ զգացումը.
իսկ տնտեսական պայմաններն արգէն բոլորովին
հեռացնում են նրան ամուսնական գաշնագրու-
թեան զլսաւոր պայմանների միջեց:

Սյսպէս՝ ըստ երեսյթին ժամանակակից կեանքը
բոլորովին չե ուզում հաշառուել հոգեբանութեան
և առողջապահութեան պահանջների հետ. Կար-
ծես թէ նա բոլորովին անհրաժեշտ չե համարում
համակերպուելու բնութեան օրէնքներին:

Բայց բնութիւնն էլ իւր կողմից մարդուն
հատուցանում է նրա վարմունքի համեմատ. նա
մէծ խնամքով նշանակում է իւր պահանջներն
ուսնակոխ անօղների իւրաքանչեւրի քայլը, և պատ-
ժում է նոցա:

Բնութիւնը ոչ մի գործ չունի տգիտութեան,
նախապաշարումների և մարդկանց զիտակցական

շեղումների հետ. և այն բոլորը՝ ինչ որ խանդարում է իւր անխօս օրէնքների կատարումը, առանց խնայելու հեռացնում է այլասերման միջոցով:

Սակայն մարդկութիւնը մշակել է բաւականին հաստատուն միջոցներ այլասերումից խուսափելու համար:

Գիտութեան ցուցմունքներն այդ գէպքում կարող են թանկագին ծառայութիւններ մատուցանել:

Պէտք է կարծել, թէ մարդկանց դասակարակութիւնը, կրթութիւնը և գիտնական ճշմարտութիւնների վերայ հիմնուած տնտեսական յարաբերութիւնը՝ միացած ուժերով կարող են անառակութիւնը, պոռնկութիւնը, արբեցութիւնը կուլտուրական կեանքից հեռացնել և հասարակութեան բարյականութիւնը բարձրացնել, սիրոյ զգացումը իւր բովանդակ փայլով ու մաքրութեամբ վերականգնել:

Այն ժամանակ այդ զօրեղ զգացումն արգէն ինքն իրան կրպաշտականէ. անբարյական միջավայրն այլ ևս չի կարողանալ նրան քայլքայել, փողի առաջ չի խոնարհիլ այլ խիստ մահացու հարուած կրտայ ոսկիների վերայ հիմնուած ամուսնութեան:

Այսպէս ուրեմն՝ անառակութիւնը խորտակում է մարդկանց կեանքը, և զրա համար ուսումնասիրել, կոռւել և արմատախիլ անել նրան՝ իւրաքանչիւր մարդու սրբազն պարտքը պէտք է հա-

մարուի. արմատական ամենալաւ միջոցը պէտք է լինի հասարակութեան կանոնաւոր դաստիարակութիւնը, այսինքն՝ Փիղեական, բարոյական ու մտաւոր ներդաշնակ կրթութիւնը:

Դ.

Ինչպէս կենդանական, նոյնպէս էլ բուսական աշխարհում անհատի հասակը և զարգացումը վերջանում է աճեցողութեան գործարանների կազմոկերպութեամբ:

Հետեաբար այդ գործարանները սկսում են գործել միւսներից աւելի ուշ:

Մարդու սեռական գործարանները նոյնպէս սկսում են կանոնաւոր գործել այն ժամանակ երբ արդէն վերջնականապէս կազմակերպուած են մարմնի միւս գործարանները. տղամարդու համար այդ ժամանակը համնում է 25 տարուց ոչ կանուխ, իսկ կնոջ 20-րդ տարին: Իսկ վաղահաս ամուսնութիւնը պատճառ է գառնում կանանց շուտ թառամելուն:

Սկսած այդ հասակից կանայք և տղամարդիկ շատ կամ սակաւ չափով սեռական յարաբերութեան պահանջ են զգում, որ երեան է գալիս բաւականին երկար ընդմիջութերով, և եթէ չստանայ իսկ բաւարարութիւն, այնու ամենայնիւ ոչ մի վատ հետեանք չի ունենալ:

Սեռական մերձաւորութիւնն այն ժամանակ միայն բնական կրթինի, երբ մարդ զգայ այդ պահան-

ջի պարզ և որոշ արտայցառութիւնը, այն էլ արդէն ֆիզիքապէս կատարեալ հասուն հասակում:

Իսկ այն սեռական յարաբերութիւնը, որ համապատասխան չէ վերև յիշած պայմաններին, և կատարում են այնպիսի անհատներ, որոնք գեռչեն հասել իրանց դարդացման գաղաթնակէտին, ուղղակի վնասակար է օրգանիզմին:

Այսպիսով սեռական պահանջի բաւարարութիւն տալու կանոնաւոր ընթացքի խանգարումները լինում են երկու տեսակ. ա. երբ այդ ցանկութեան բաւարարութիւն տալը սկսուի շատ վաղ, գեռ ևս անհատի վերջնական կերպով ֆիզիքապէս զարդանալուց առաջ. և բ. երբ կատարուի անկանոն կերպով այսինքն՝ անժամանակ:

Այսպիսի անժամանակ սեռական մերձաւորութիւններն՝ առողջապահական տեսակէտից կոչվում են անառակութիւն:

Անառակութիւնը բնութեան օրէնքի խեղաթիւրումն է և նորա չարաչար գործադրութիւնը:

Անառակութեան այս սահմանը ծագում է սեռական պահանջի էութեան բննութիւնից:

Բայց սեռական յարաբերութիւնը բայցի դրանից պէտք է կատարէ և մի ուրիշ շատ նշանաւոր գեր. նա պէտք է ծառայէ նոյնպէս սերնդի յարաւութեան գործին:

Այս տեսակէտից՝ սեռական յարաբերութիւնը պէտք է թշլաարուի միայն այն մարդկանց, որոնք սիրում են միմեանց:

Միայն սէրը կնոջ և մարդուն իրաւունք է

տալիս ունենալու սրտակից, մտերմական յարաբերութիւն, որովհեակ միայն նո կարող է լինել գրաւական, որ նոյա երկխաները կը լինին թէ մարմաւոր և թէ հոգեկան լաւ յատկութիւններով օժտուած:

Սեռական յարաբերութիւնն այն կանանց և տղամարդկանց մէջ, որոնք չեն սիրում միմեանց, հակառակ է բնութեան. և զրա համար այդպիսի յարաբերութիւններ ցանկալի չեն և նոյն իսկ վնասակար:

Հետեաբար նոքա ևս ներկայացնում են անառակութեան բազմաթիւ երկեցներից մէկը:

Այսպէս ուրեմն եթէ բնական համարենք այն սեռական յարաբերութիւնը, որ կատարվում է միմեանց սիրող մարդկանց մէջ՝ նոյա հասունացած ժամանակ, և այն էլ՝ երբ այդ մերձաւորութիւնն արտայցալում է պարզ կերպով հետեաբար հակառակ յարաբերութիւնը պէտք է համարել անբնական և վնասակար:

Տէնց այս է որ կոչվում է անառակութիւն, անբարոյականութիւն՝ այս բառի ամենալնդարձակ նշանակութեամբ:

Անառակութիւն է ոչ միայն պոռնիկ կանանց հետ մերձաւորութիւն ունենալը, այլ և այն չափազանց յաձալս և այլանդակ յարաբերութիւնը, որ գոյութիւն ունի ամսումնական կեանքում: Երկու տեսակ անառակութիւնն էլ վնասում է անհատին, հասարակութեան և պետութեան:

Անառակութեան այն տեսակը՝ երբ մարդիկ

սեռական յարաբերութիւն են ունենում ֆիզիքապէս դեռ կատարեալ չպարզացած հասակում, առանձնապէս վնասակար է առողջութեան:

Այս գէպքում կանգ է առնում ամբողջ օրդանիզմի զարգացումը, և չի հասնում այն զարգացման՝ ինչ որ լինում է ժուժկալութեան ժամանակ:

Սովորաբար տղամարդիկ մինչև ամուսնանալը սեռական յարաբերութիւն են ունենում պոռնիկ կանանց հետ:

Այս բանը շատ վատ ազդեցութիւն է թողնում երիտասարդ՝ դեռ ևս չփացած տղամարդկանց հօգեկան կեանքի վերայ:

Պոռնիկ կանանց հետ յարաբերութիւն ունենալը շատ վատ հետքեր է թողնում տղամարդու հետագայ կեանքի վերայ, այդ հետքերը բաւական յայտնի կերպով երեան են դալիս և ամուսնական կեանքի մէջ:

Որ և իցէ լաւ ընտանիքի զաւակ, երբ կորցնում է չփացած մարդու ամօթխածութիւնը, շրջելով պոռնիկ կանանց հասարակութեան մէջ, այնպիսի կանանց, որոնք իրանց ծախում են կամ ծածուկ կերպով, կամ թէ յայտնի տներում ստիկանութեան հսկողութեան տակ, — այդպիսի կորած զաւակներն անպատճառ ենթարկվում են այդ նեխուած միջավայրի ստոր ազդեցութեան:

Նրա վարմունքը դառնում է կոպիտ, գեղադիտական զգացումը բութ, բնաւորութիւնը՝ խիստ, կորցնում է իւր քննքութիւնը, լինում է անխիղ,

և վերջապէս՝ վճանում են բոլոր լաւ սովորութիւնները, նա դառնում է անվճռական, անհասաւատ ու կեղտոտ:

Գաղտնի կերպով մտնելով վատ հասարակութեան մէջ՝ երիտասարդը կորցնում է իւր զգացումը, և անձնատուր է լինում իւր ստոր կրքերին:

Պէտք է աւելացնել որ զգաստութեան, չափաւորութեան և բարյական ուժի պակասութիւնը երեան է գալիս գործունէութեան այլ տեսակներում՝ նուաղեցնելով մտաւոր ուժերի արդիւնաւորութիւնը:

Աշխուժութեան բայցակայութիւն, ջղային հիւնդութիւն, անհաստատութիւն, թոյլ բնաւորութիւն, թառամած գէմք—այս բոլորը վազաժամ ծերութեան նշաններ են, և հետեաբար սեռական յարաբերութեան վաղ սկսուելուն:

Դժբախտ ամուսնութիւնների մեծ մասը փորձուած բժիշկների և մարդկանց կեանքն ուսումնասիրողների խօսքով՝ պէտք է վերագրել այն հանգամանքին, որ տղամարդիկ անառակութեամբ պրցծուելուց յեայ՝ անամօթութեամբ ամուսնանում են բոլորովին անմեղ անսարատ օրիորդների հետ:

«Ո՞րքան յաճախ պատահում է որ մանկամարդ կանայք, ամուսնանալով գրկում են իրանց սիրելի մարդուն, և զարթնում անասնական հակումներով մարդու մօտ...»:

Դերմանացի գիտնականի այս խօսքերը բոլորովին ձշմարիտ են:

Յիրաւի՝ վաղաժամ սեռական յարաբերութիւնները քայլայում են ջղային համակարգութիւնը, և զրանով աչազին մնաս են պատճառում մարդու օրգանիզմին:

Խանդարելով ուղեղի սննդառութիւնը, անժամանակ սեռական յարաբերութիւնը թուլացնում է նրա աշխատելու ուժը, հետեւրար կաշկանդում է մարդու թէ մատառը և թէ բարոյական զարգացումը:

Ամուսնութիւնից առաջ կատարուած սեռական յարաբերութիւնները պոռնիկ կանանց հետ լինի զա մինչեւ օրգանիզմի կատարելապէս զարգանալը, կամ թէ նրանից յետոյ, միշտ իւր հետքերը թողնում է ամուսնական կեանքի վերայ:

Ամուսնական երջանկութիւնը — մարդկային երջանկութեան ամենազլիսաւոր պայմաններից մեկն է, և առհասարակ շատ հաղուազիւտ է կեանքում:

Հաղիւ թէ պատահի մեր կեանքում որ և է մի ուրիշ բան, որ այնքան երջանկութիւն պատճառէ մեզ՝ որքան երջանիկ ամուսնութիւնը:

Բարձրագոյն ուսումն ստացած մարդիկ առհասարակ իրանց կեանքի ամենալաւ ժամանակը՝ ուսանողական շրջանն են համարում:

Բայց մեզ թւում է, թէ ամուսնական երջանիկ կեանքը պատճառում է մեզ աւելի շատ ու քաղցր զուարձութիւններ, քան թէ այդ պատահում է ուսանողութեան ժամանակ:

Բայց կրկնում ենք, երջանիկ ամուսնութիւնը

առհասարակ շատ հաղուազիւտ է, և ի հարկէ շատ ցաւալի է այդ....

Երջանիկ ամուսնութիւնների հաղուազիւտ լինելու պատճառները զլիսաւորապէս թաքնուած են աղամարգիանց մինչեւ ամուսնութիւնը վարած կեանքի մէջ:

Ամուսնութիւնից առաջ աեղի ունեցած սեռական մերձաւորութիւնների սանձարձակութիւնը խանդարում է ամուսնական երջանկութիւնը: Նա մոցնում է ամուսինների մէջ այն լիրը յարաբերութիւնը, որ սովորաբար պատահում է առառականուցներում, և որը անտեղի է ամուսնական երջանկութեան համար:

Բայց կրանից՝ ամուսնական երջանկութիւնը սերա կապուած է սեռական յարաբերութեան հետ:

Երբ այդ յարաբերութիւնները կատարելապէս բնական են, և բնութեան օրէնքների սահմաններից չեն գուրս գալիս, այն ժամանակ միւս բարեյաջող պայմանների հետ միասին մեզ բազմաթիւ և բազմակողմանի հաճելի զգացութներ են ընդայում:

Բայց եթէ կանոնաւոր սեռական մերձաւորութեան փոխանակ տիրում է խառնակութիւն, այն ժամանակ ստոր կրքերը զերտկշռում են, և ամուսինների մէջ առաջ են գալիս վաս յարաբերութիւններ:

Բնական սեռական յարաբերութիւնների խախտուելուն ամուսնութեան մէջ զլիսաւորապէս նպաստում է աղամարգու սանձարձակ սեռական յարա-

բերութիւնը, որ պատահում է ամուսնանալուց առաջ:

Խոնդիրն այն է, որ սեռական մերձաւորութիւնը միայն այն ժամանակ է լինում տեղին ու կանոնաւոր, երբ նրա զրդիքը լինում է ինքը բնութիւնը:

Իսկ զրանից գուրս՝ նա միշտ կարող է պասել մարդու օրդանիզմին:

Հետեաբար պէտք է զիտել վերցյիշեալ ըոսէն, այսինքն՝ պէտք է հասկանալ այն ակնարկները, որով բնութիւնը հասկացնում է մեզ սեռական յարաբերութեան ժամանակը:

Առողջ մարդուն յատուկ է օրդանիզմի պապանջների պարզ ըմբռնումը. միայն այդպիսի մարդը պարզ կերպով զգում է քաղցածութիւն, ծարաւ և այլն:

Այն մարդը, որի ստամոքսը փձացած է, կամ ջղերը՝ որոնք նշանակուած են կառավարելու մարսողութիւնը, խանգարուել են ծխելուց, արդէն չի կարող պարզ կերպով հասկանալ քաղցածութեան զգացումը, ինչպէս այն մարդը, որի ստամոքսը առողջ է և որը չի ծխում:

Նոյնը կարելի է ասել և սեռական պահանջի մասին. նա բոլորովին պարզ կերպով զգացվում է որոշ ժամանակում, երբ մարդս բոլորովին առողջ է, և զգում են առանձնապէս նոքա, որոնք սեռական յարաբերութիւն են ունենում օրդանիզմի կատարեալ զարգացման ժամանակ, այսինքն՝ ժուժկալութիւն սիրող մարդիկ:

Իսկ վաղաժամ մերձաւորութիւնները աղամարդին անընդունակ են գարձնում որոշելու սեռական յարաբերութեան ըստին:

Նա սեռական զգացյութեան ամենաչին դրդիոն անդամնշան է համարում, որ իբր թէ պէտք է յարաբերութիւն ունենալ:

Եյս պարագան ամուսնութեան մէջ մայնում է անբարցյականութիւն, և ոչնչացնում ամուսնական յարաբերութիւնների կանոնաւոր ընթացքը:

Եւ այսպէս մինչև ամուսնութիւնն եղած սեռական սանձարձակութիւնը խանգարում է ամուսնական երջանկութիւնը:

Եյդ բարձրագոյն երջանկութիւնը՝ կարելի է ասել վայելում են միայն բոլորովին անարատ մարդիկ:

Ի հարկէ միայն այդ պայմանը բաւական չէ ընտանեկան երջանկութեան յարատեսութեան համար, բայց և այնպէս նրա հիմքն է կազմում:

Առանց ժուժկալութիւն պահպանելու մինչև ամուսնութիւնն կարող չէ ընտանեկան երջանկութիւն լինել:

Որովհետեւ ժամանակակից կեանքի ներկայ հանգամանքներում տղամարդկանցից շատ քէրը լինում են անարատ մինչև ամուսնութիւն, ուստի հասկանալի է, թէ ինչու այսքան հազուազիւտ են երջանիկ ամուսնութիւններ. այս բանում սաստիկ մեղաւոր են տղամարդիկ, ի հարկէ ի նկատի չառնելով այն ընկերվարական—տնտեսական պայմաննելով այն ընկերվարական—տնտեսական պայման-

ները, որոնք նոյնպէս պակաս դեր չեն խաղում այս բանում:

Երտաքյ ամուսնութեան եղած սեռական յարաբերութիւնները՝ լինին նրանք օրգանիզմի վերջնական դարձացումից առաջ թէ յետոյ, միշտ միքանի հիւանդութիւնների պատճառ են լինում: Այն բոլոր հիւանդութիւնների մէջ՝ որոնցով յաճախ վարակվում են աղամարդիկ պոռնիկ կանանցից, անկատկած առաջին տեղը, բռնում են սիֆիլիսը (սրխլմայ) և միզուկի բորբոքումը—տրիպերը (սուսունակ):

Ե.

Անառակութեան գլխաւոր դաշնակիցն անկատկած սիֆիլիս կոչուած վտանգաւոր հիւանդութիւնն է:

Նա բաւականին յայտնի է ամեն տեղը և այդ հիւանդութիւնով վարակուղներ շատ կան:

Նրա բժշկութեան միակ միջոցը՝ սնդիկն ու եօդն է, և լաւ բժշկուելու համար անհրաժեշտ է զից մինչեւ 5 տարի. և եթէ այսպիսի մի հիւանդ բժշկվում է, նա իւր ամբողջ կեանքում սարսափի մէջ է լինում, թէ ինչ անէ, որ այդ վատ հիւանդութիւնը չիրկնուի, և կամ ժառանդաբար չանցնի իւր որդիներին:

Կասկած չեայ թէ ներկայումս սիֆիլիսի սաստիկ դարձացման շատ նպաստում է պոռնկութիւնը:

Պոռնկութեան դէմ համեմատաբար առաւել պէտք է կռուել քան թէ խօլերայի դէմ, որովհետեւ

սիֆիլիսի աւերութներն աւելի մեծ են և առաւել վնասակար, քան թէ խօլերայինը:

Բացի գրանից սիֆիլիսը իւր հետեանքներով շատ վտանգաւոր և սպառնալից է անհատների և հասարակութեան համար, քան թէ խօլերան:

Ի հարկէ հասկանալի է որ սիֆիլիսով ամենից շատ վարակվում են երիտասարդները:

Սիֆիլիսն առաջացնումէ այլասերում. նպատառում է կանանց վիժելուն և եթէ երեխաներ էլ ծնուին այսպիսի ծնողներից, նորա լինում են թոյլ կազմուածքով, և զանազան հիւանդութիւններով բռնուելու ժառանդական հակումով:

Սիֆիլիսը սաստիկ քայլքայում է անհատի տնտեսական գրութիւնը. նա պահանջում է երկարատև բժշկութիւն և ստիպում է աղամարդուն երկար ժամանակ թողնելու իւր պարապմունքը:

Նա պետութեան նոյնպէս մեծ ծախք է պատճառում, որովհետեւ դրա համար հարկաւոր է յատուկ բուժարաններ հիմնել:

Եւ առհասարակ սիֆիլիսը մի մեծ չարիք է:

Միւս հիւանդութիւնը՝ որ ի միջի այլոց շատ սովորական է, երբ մարդիկ յարաբերութիւն են ունենում պոռնիկ կանանց հետ, արիպերն է—միզուկի բորբոքութն (սուսունակ), որի վարակման սկզբնապատճառը նէյսերի միկրոբն է (գոնոկոկ):

Այս վարակիչ հիւանդութիւնն այնքան սարսափ չէ ազդում որքան առաջինը:

Ըստհակառակը նա հասարակութեան մէջ թեթև հիւանդութեան համբաւ է վայելում:

Արդ տեսնենք թէ բժիշկները սրա մասին ինչ կարծիք ունին. «Միւս հիւանդութիւնն՝ որ տղամարդը մացնումէ ընտանիքի մէջ, մերձաւորութիւն ունենալով ամուսնութիւնից առաջ պոռնիկ կանաց հետ՝ պատճառելով սաստիկ տանջանքներ, ներգործումէ աւելի փոքր չափով, քան թէ սիֆիլիսը»:

«Բայց որովհետև նրա վերայ շատ քիչ են ուշադրութիւն դարձնում, այդ պատճառով նրա հետեանքները շատ վատ են լինում, մեր խօսքը տրիպերի—միզուկի բորբոքման (սուսունակի) մասին է:

«Երբեմն նա բոլորովին ոչնչացնում է ընտանեկան երջանկութիւնը»:

Կանաց հիւանդութիւնների մասնագէտ բժիշկները, և ի միջի այլոց յայտնի ծննդաբան Շրեդէրը՝ շատ յաճախ տեսնում են ամուսնացած մանկամարդ կանաց, որոնց ձանաչում էին իբրև առողջ կենսական ցիժերով լի օրիորդներ, բոլորովին հիւանդ ամուսնական կեանքից մի քանի շաբաթ անցած:

Ամուսնական կեանքը, որի մասին մանկամարդ կանացը չեն խօսում, լինում է խաբուսիկ, և չի պարզեւում նորանց այն, ինչ որ երազում էին:

Անզաւակութիւնը, զանազան կանացի հիւանդութիւններ, ջղային խանդարութիւնը՝ այս բոլորը ժամանակակից կանաց առաջնորդներն են իրանց ամուսնական կեանքում:

Եւ այդ բոլոր տանջանքների գլխաւոր պատճառը մեծ մասամբ տղամարդկանց սեռական գոր-

ծարանների հիւանդութիւններն են, որոնք իբրև թէ արգէն բժշկուած էին:

Կրկնում ենք, որ ներկայ հանգամանքներում մեծ բախաւորութիւն պէտք է համարել երբ բոլորովին առողջ և լաւ ընտանիքից դուրս եկած աղջիկը ամուսնանալով՝ չփանաց իւր ամուսնուց մի որ և է հիւանդութեամբ, և չքայբայէ իւր առողջութիւնը:

Նատ մեծ ծառայութիւն արաւ նիւեօրքի բժիշկներից մէկը՝ համոզիչ կերպով ապացուցանելով ծածուկ և խրօնիքական տրիպերի նշանակութիւնը կանաց սեռական գործարանների հիւանդութեան մէջ:

Այդ ծածուկ տրիպերը՝ այն տրիպերն է, որ չնայելով արտաքին նշանների անյայտանալուն՝ դարձեալ զոյութիւնը պահպանում է մի քանի տարի, շնորհիւ այն հանդամանքներին որ լաւ բուժուածէ:

Կանաց մէջ տրիպերը զարգանում է՝ չպատճառելով երկար տարիներ ոչ մի վեաս նրանց առողջութեան, և յանկարծ երեան է զալիս երբ նրանց սեռական գործարաններն որ և է կերպով զրդովում են:

Այդ խրօնիքական տրիպերը կանացի բոլոր հիւանդութիւններից աւելի յաճախ է պատահում, և իւր կողմից առաջացնում է զանազան ուրիշ թեթև հիւանդութիւններ:

Ի միջի այլոց՝ առաջ է զալիս կանաց հեշտոցի թաղանթի բորբոքութն, որ հասնում է մինչեւ ձուերին:

Ուրեմն տրիպերով վարակուած տղամարդկանց կանայքը պէտք է հիւանդ լինին:

Բանը այնտեղ է հասել, որ կրթուած մանկամարդ կանայք վախինում և հրաժարում են ամուսնութիւնից, որովհետեւ նոցա ծանօթներն ամուսնանալով իսկոյն հիւանդանում են և շատ գժուարութեամբ են առողջանում:

«Բացի բազմաթիւ կանայք հիւանդութիւններից՝ գաղտնի տրիպերն առաջացնում է անպրտղութիւն, և եթէ կինը յղանում էլ է, առաջ է գալիս վիժում, կամ գաղաժամ ծնունդ:

Այսպէս ուրեմն՝ տրիպերն այնքան էլ աննշան հիւանդութիւն չէ, ինչպէս որ սովորաբար կարծում են:

Շատ սովորական է, որ տղամարդիկ՝ որոնք հինգտասը տարի առաջ ունեցել են տրիպեր, և համոզուած են եղել թէ արդէն բոլորովին առողջ են, ամուսնանալուց յետոյ վարակում են իրանց նորատի կանանց»:

Այս նկարագրութիւնից երեսում է, որ տրիպերը տանջում է ոչ միայն տղամարդկանց, այլ աւելի ևս կանանց:

Այս հիւանդութիւնը բոլորովին խորտակում է ամուսնական երջանկութիւնը: Կանանց սեռական գործարանների հիւանդութիւնները, որոնք առաջանում են տղամարդուց տրիպերով վարակուելուց, պատճառ են դառնում զանազան ջղային հիւանդութիւնների:

Կնոջ այդ յարատեւ տանջանքներն արդէն բա-

ւական են՝ թունաւորելու ընտանեկան ամէն տեսակ բախտաւորութիւն:

Միշտ գեղերի յետեւից ընկնել կանոնաւոր դիտողութիւններ անել առողջութեան վերաբերմամբ, վրդովուել շարունակ վախ՝ որ նոր բարդութիւններ կարող են առաջ գալ սեռական գործարանների ցաւեր—այս բոլորը պատճառում են կնոջը սաստիկ ծանր հոգեկան տանջանքներ: Այնպէս որ սրանից էլ վատ թշնամի չել կարող երեակայել մարդա:

Եւ այդ ժամանակ կանանց, եթէ մինչեւ անդամ իսկ երբեմն իրանց բոլորովին առողջ զգան, ինչպէս ստուեր հետեւում է նրանց այն միտքը, թէ ոչ մի րոպէ ազատ չեն թշնամու յարձակումից:

Այդ թշնամին հետեւում է նոցա ամէն տեղը, և նրանից ոչ մի ժամանակ չել կարելի ազատուել, ոչ քաղաքներում և ոչ գիւղերում:

Այս բոլորն առաջ է գալիս նրանից, որ հիւանդները սկզբում ուշադրութիւն չեն դարձնում բժշկութեան կանոնաւորութեան վերայ: Իսկ յայտնի է, թէ ի՞նչքան մեծ գժուարութեամբ է առաջ գնում իրօնիքական հիւանդութիւնների բժշկութիւնը:

Աշա այսպէս է անառակութեան հետեւանքը ընտանիքի համար:

Պարզ է, որ այդ տեսակ հիւանդութիւններով վարակուածները չպէտք է ամուսնանան առանց բժշկի խորհրդի:

Միֆիլիս և տրիպեր ստանում են այն բոլոր

մարդիկ (մինչեւ 70—80⁰), որոնք սեռական յարաբերութիւն են ունենում պոռնիկ կանանց հետ:

Ով որ ամուսնական կիանքից դուրս անձնատուր է լինում սեռական յարաբերութիւն, գրեթէ միշտ վարակվում է վեներական ախտերով՝ առաջին երեք տարիներում:

Բժշկական-ոստիկանական հսկողութիւնը բոլորովին անկարող է մեզ վարակուելուց պաշտպանել:

Եւ այսպէս մինչեւ ամուսնութիւնն եղած սեռական յարաբերութիւնը երկու սեռին էլ ահազին վեաս է պատճառում: Նաև խորտակում է մարդու առողջութիւնը, փձայնում է հոգեկան լաւ յատկութիւնները, առաջացնում է սեռական կրքերի սանձարձակութիւն, և անգարձ կերպով խորտակում է ընտանեկան երջանկութիւնը:

Ուրեմն՝ ինչպէս ասացինք, քահանան պէտք է պսակից առաջ ամուսնացող զոյդից պահանջէ առողջութեան վկայական:

Զ.

Ամուսնական կեանքի մէջ սեռական մերձաւորութիւնները նոյնպէս պէտք է ենթարկուին բնութեան օրէնքներին: Իսկ եթէ նոքա կատարվում են թեան ցուցումներին հակառակ, այն ժամաբնութեան ցուցումներին հակառակ, այն ամուսինների անակ անպատճառ քայլայում են ամուսինների առողջութիւնը, և քանդում նոցա բնական յարաբերութիւնները:

Անսառակութիւն ամուսնութեան մէջ, այսին-

քըն` սեռական յարաբերութիւն ոչ թէ անհրաժեշտ կարիքին բաւարարութիւն տալու համար, շատ տարածուած երկոյթ է:

Արդէն յայտնի է, որ սեռական զործարանները սերտ կերպով կապուած են մարմնի միւս մասերի հետ, և առանձնապէս ջղային համակարգութիւն հետ:

Այսուղից երեսում է, որ սեռական յարաբերութեան չափազանցութիւնը պէտք է վնասէ միւս զործարանների գործունէութեան:

Այս գէպքում երբ արիւնն առատութեամբ հոսում է գէպի սեռական զործարանները՝ մեր միւս զործարաններում արեան պակասութիւն է զգացվում:

Եթէ սրտի զործունէութիւնը սահմանափակ չլինէր, և եթէ կարողանար մատակարարել ամէն մի զործարանին այնքան արիւն, որքան որ հարկաւոր է՝ ոչ միայն նրա կանոնաւոր, այլ և զօրաւոր զործունէութեան համար, այն ժամանակ անհանգիստ լինելու կարիք չէր լինիլ, որովհետեւ ամէն մի կորուստ՝ որքան էլ մեծ լինէր և օրգանիզմի որ մասումն էլ առաջանար, կարող էր փոխարինուել՝ առանց վնասելու միւս զործարաններին, որոնք այդ բանում ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել:

Բայց իրապէս այսպէս չէ: Սիրաը իւր աշխատանքը կարող է զօրացնել շատ աննշան չափով, և այն էլ կարծ ժամանակով, և եթէ տալիս է որ և է զործարանին սովորականից աւելի քանակութեամբ արիւն, այդ լինում է ի հաշիւ

մարժնի միւս մասերին, այսինքն՝ այդ ժամանակ միւս գործարանները շատ քիչ արիւն են ստանում:

Սեռական գործարանների գործունէութեան ժամանակ վնասվում է միւս գործարանների մննդառութիւնը, և առանձնապէս ուղեղի սկզբառութիւնը:

Աշա թէ ինչու մենք ամէն մի քայլում կարող ենք դիտել, իբրև ամուսնական յարաբերութիւնների չափազանցութեան հետեանքներ (ինչ պէս և նրանից դուրս) արեան պակասութիւն, նիշարութիւն, ընդունակութիւնների բթացում, և վերջապէս ամբողջ օրգանիզմի քայլքայումն:

Ֆիզիօական առողջութեան քայլքայումն էլ իւր հիբթին զանազան հիւանդութիւնների համար հող է պատրաստում:

Բայցի դրանից՝ ամուսնական անառակութիւնը թուլացնում է մարդկային հոգու բարձրագոյն ձգտութեանը հետաքրքրուելու կարողութիւնը:

Դա ջղային քայլքայման հետեանք է, որ առաջ է դալիս սեռական յարաբերութեան սանձարձակութիւնից:

Որ այդ այդպէս է լինում, դժուար չէ հասկանալ: Մենք նոր ասացինք, թէ սեռական գործարանների անչափ գործունէութիւնից վնասվում է միւս գործարանների մննդառութիւնը, և ի միջի այլոց ջղային համակարգութիւնը:

Դրանով գուցէ կարելի է բացագրել այն դէպէրը, երբ բոլորովին առողջ տղամարդիկ յաճախ

սեռական յարաբերութիւն ունենալուց առաջ՝ զբւխացաւով տառապում են:

Ուղեղի վատ սնունդ ստանալը, որի պատճառն անառակութիւնն է, անընդունակ է գարձնում նրան կանոնաւոր և յարատե գործունէութեան:

Բարձր հոգեկան շահերը, որոնք մարդիկ մեծ դժուարութեամբ են իւրացնում, հեշտութեամբ տեղի են տալիս ստոր, առօրեայ և ոչ մի մտաւոր լարում չպահանջող շահերին:

Որքան որ առաջիններն իրանց զարգացման համար կարօտ են առողջ ջղային համակարգութեան, այնքան էլ վերջինները հեշտութեամբ հաշտում են նրա քայլքայման հետ:

Աշա թէ ինչու ամուսնութեան բոպէն շտերի համար յետամնացութեան սկիզբն է:

Ի հարկէ՝ ամուսնացած մարդկանց անուշագրութիւնը դէպի կեանքի բարձրագոյն խնդիրները, միշտ չի կարելի վերագրել սեռական սանձարձակութեան, որովհետեւ ընտանեկան հոգսերն ես չեն նպաստում նրան. բայց համահաւասար պայմաններում ամուսնական անառակութիւնը մեծ հարուած է տալիս տղամարդու մտաւոր կեանքին:

Ամուսնութեան մէջ կանոնաւոր սեռական պահանջներին բաւարարութիւն տալուց նշանաւոր չափով խոտորուելը՝ ջղային հիւանդութիւնների պլիսաւոր պատճառն է:

Առանձնապէս վնասակար են այն սեռական այլանդակութիւնները, որոնք հնարել են քաղա-

քակիրթ ազգերը երեխաների ծնունդը արգելելու
համար:

Սեռական յարաբերութեան չափաղանցութիւ-
նը աւելի վեասակար է տղամարդուն՝ քան թէ
կնոջը:

Այդ առաջանում է նրանից, որ աղամարդի
մէջ սեռական գործողութիւնը առաջ է բերում նիւ-
թի պակասութիւն և ջղային համակարգութեան
խիստ գրգռում, քան թէ նոյնը կատարվում է
կնոջ մէջ:

Սերմի կորուսար փոխարինվում է նորի մշա-
կումով, և եթէ յաճախ է պատահում այդ կորուս-
ար, այն ժամանակ սերմնային գեղձերի գործու-
նէութիւնը ուժեղանում է ի վեաս մարմնի միւս
մասերի սննդառութեան, և առաջ է բերում ինչ-
պէս վերեն ասացինք, օրդանիզմի քայլայում:

Կանանց մէջ սեռական յարաբերութեան չա-
փաղանցութիւնն առաջ է բերում հեշտոցի բոր-
րոքում և ջղային հիւանդութիւններ:

Յամենայն դէպօ՝ անառակութիւնն ամուսնու-
թեան մէջ աւելի շատ վեասում է տղամարդկանց,
քան թէ կանանց:

Ոչ միայն սեռական յարաբերութեան յաճախ
կրկնուելը, այլ և յայտնի հեշտասիրական ցնորք-
ները մեծ վեաս են պատճառում օրդանիզմին. նո-
քա արեան հոսանքը դէպի սեռական գործարան-
ները սաստկացնում են, նպաստում են տղամարդ-
կանց սերմի շուտով աճելուն և թուլացնում են
միւս օրդանների սննդառութիւնը:

Որպէս զի բոլորովին վերջացնենք մեր խօսքը
անառակութեան մասին, պէտք է յիշատակենք նաև
այնպիսի անհատների սեռական յարաբերութեան
վեասակարութեան մասին, որոնք միմեանց չեն
սիրում:

Այդ գէպքում ոչ տղամարդը և ոչ էլ կինը կա-
տարեալ բաւականութիւն են ստանում, իսկ զըլ-
խաւոր վեասը կրում է նոցա սերունդը (եթէ ի
հարկէ լինի). Փիզիքապէս թուլակաղմ և մտաւո-
րապէս անընդունակ երեխաներն այդ գէպքում
իրանց ամբողջ կեանքում տանջվում են իրանց
ծնողների մեղքերի համար:

Ներկայումս մարմնով և հոգով վաս կազմա-
կերպուած մարդկանց համար շատ դժուար է ապ-
րելը, իսկ ապագայում՝ նոցա աւելի ևս մեծ դրժ-
ուարութիւններ կրպատահին:

Այս հանդամանքը պահանջում է, որ մարդիկ
ամուսնանան ի միջի այլոց սիրոյ դրդումով և ա-
մուրի ժամանակ պահպաննեն իրանց անառակու-
թիւնից:

Է.

Այստեղ մենք մանրամասն կրխօսենք այն
վեասների մասին, որ կրում են քսանեցինդ տարին
անցկացրած տղամարդիկ, երբ պսակուելուց առաջ
սեռական յարաբերութիւն են ունենում պոռնիկ
կանանց հետ:

Կենդանին միայն այն ժամանակ է զգում սե-
ռական պահանջ, երբ բոլորովին զարգանում է,

այն էլ՝ միայն տարուայ որոշ ժամանակամիջոցում,
այսպէս կոչուած սերմի գրգռման ժամանակ:

Իսկ մարդու սեռական ձգումը կապուած չէ
տարուայ որ և է շրջանի հետ, բայց և այնպէս
բաւականին կանոնաւոր է, և համեմատաբար ու-
ժեղ է ամբողջ տարուայ ընթացքում:

Սակայն մարդս ունի սեռական պահանջները
կանոնաւորելու միջոց, որով զանազանվում է միւս
կենդանիներից:

Այս կանոնաւորութեան միջոցը գիտակցու-
թիւնն է:

Եթէ երիտասարդի սեռական պահանջը շատ
ուժեղ է լինում, դա բնութեան կանոնաւոր բնա-
կան դրդիչը չէ, այլ մեր կեանքի հակաբնական
երեցիների արտայայտութիւն:

Դժբախտաբար մարդիկ շատ քիչ ուշադրու-
թիւն են դարձնում այն կանոնաւորիչ ուժի—զի-
տակցութեան վերայ, որի մասին արդէն խօսեցինք:
Բացի դրանից նոքա զիտակցութեան ձայնը խեղ-
դում են զանազան հնարովի հիւանդութիւննե-
րով, որոնք իբր թէ ժուժկալութեան հետեանք
են, և անձնատուր են լինում անառակութեանն:

Այդ նախապաշարումները յաճախ ամուրի ե-
րիտասարդների անառակութեան պատճառ են լի-
նում:

Կան նոյն իսկ բժիշկներ, այժմ հազուագիւտ՝
որոնք ամուրիների սեռական յարաբերութիւն ու-
նենալը՝ սեռական գործարանների կանոնաւոր գոր-
ծունէութեան դլիսաւոր նեցուկն են համարում:

Այդ մարդիկ քարոզելով սեռական գործարան-
ների վարժութեան անհրաժեշտութիւն՝ ուղար-
կում են տղամարդկանց պոռնիկ կանանց մօտ:

Այն վկայութիւնը՝ թէ ամուսնութիւնից գուրս
եղած սեռական մերձաւորութիւնները իբր թէ աձե-
ցողութեան գործարանների կանոնաւոր գործունէ-
ութեան, և կամ իսպառ անզօրութեան առաջն
առնելու համար կարեոր է, յաճախ պատահում է
փողոցային հրատարակութիւնների մէջ, և բոլո-
րովին սխալ է:

Տղամարդու սեռական գործարանների գոր-
ծունէութիւնը կայանում է սերմ մշակելու, պահ-
պանելու և թափելու մէջ:

Սերմի մշակումը սկսվում է 14—15 տարե-
կան հասակից անընդհատ, և ոչ մի մշակման կա-
րիք չունի: Սերմի պահպանումը նշյնպէս կարօտ չէ
խնամքի:

Սեռական յարաբերութիւններից ուրիշ ոչինչ
կարելի չէ սպասել բացի այն՝ ինչի համար որ
գյուղթիւն ունին:

Մի որ և է գործարան որբան նշանաւոր է,
այնքան էլ հաստատուն է լինում: բնութիւնը ին-
քը հոգս է քաշում դրա համար:

Եւ աձեցողութեան գործարաններն այնպէս նպա-
տակայարմար են ստեղծուած, որ նոյա կանոնա-
ւոր գործունէութեան համար ոչ մի վարժութիւն-
ների կարիք չի զգացվում:

Ամուսնական կեանքը կարիք ունի բարօյական

ու մոտաւոր, և ոչ թէ բնախօսական պատրաստութեան:

Աձեցման բնազդումը կատարելապէս ապաշովուած է բնութիւնից:

Պոռնկութիւնը սեռական սանձարձակութիւն է առաջացնում, փչացնում է մարդու բնաւորութիւնը և բարոյականութիւնը, և վերջապէս տղամարդկանց պարգևում է այնպիսի հիւանդութիւններ, որոնք վերջնականապէս խորտակում են ամուսնական երջանկութիւնը:

Բայց այս գեռ շատ սակաւ է:

Տղամարդիկ յարաբերութիւն ունենալով պոռնիկ կանանց հետ՝ չն աղատվում ամուսնական կեանքի սկզբում երբեմն պատահող այն սեռական թուլութիւնից, որի դէմ առնելու համար դժբախտաբար մի քանի բժիշկներ այնքան աղմուկ են բարձրացնում:

Բանն այն է, որ սեռական թուլութիւնն առաջ է գալիս զղերի սաստիկ գրգռումից, և պրօֆեսոր Կրաֆորդինդի խօսքով՝ հաւասարապէս պատահում է թէ անբարատ և թէ անբարոյական տղամարդկանց հետ:

Դա ինքնիրան անցնում է, երբ երիտասարդ ամուսինները միմեանց ընտելանում են:

Եւ ոչ մի լուրջ կին չե գատապարտիլ իւր ամուսնուն, թէ անփորձ է, որովհետեւ երիտասարդ ժամանակ լու վարք է ունեցել ընդհակառակ նա շատ կը վրդովուի, երբ կը տեսնէ որ իւր

ամուսինը փորձուած է, և այն ձեռք է բերել յարաբերութիւն ունենալով ուրիշ կանանց հետ:

Ոչ մենք բոլորովին հակառակ ենք ամուսնութիւնից գուրս եղած սեռական յարաբերութիւններին, և հիմուելով բնախօսութեան ու առօրեայ կեանքի փաստերի վերայ՝ պնդում ենք, թէ որքան էլ աղամարդը ուշ ամուսնանայ, (թէկուզ 40 տարեկան), լաւ կը լինի որ անարատ մնայ:

Միայն սիրոյ վերայ հիմոււած ամուսնութիւնը կարող է տալ կատարեալ բաւականութիւն. ամուսնական երջանկութեան հիմքը:

Անառակութիւնն ոչնչացնում է սիրոյ ամենաբարձր յատկութիւնները, և անկասկած մաշում է ամուսնական երջանկութեան հիմքը:

Տղամարդկանց դէպի անառակութիւն մզող պատճառների թուին պէտք է միայնել և տգիտութիւնը, քաղաքային կեանքի անկանոն պայմանները, հոգեկան կեանքի բացակայութիւնը, դատարկաշըջիկութիւնը, բնաւորութեան թուլութիւնը և վերջապէս ժառանգականութիւնը:

Մեզանում մինչեւ այժմ զյուրութիւն ունին ամենամութ հասկացողութիւններ կանոնաւոր սեռական զործունէութեան մասին:

Այն այլանդակ տեղեկութիւնները, որ տարածվում են բերանայի կերպով, սաստիկ նպաստում են անառակութեան զարգացման:

Յետոյ անառակութեան նպաստում են քաղաքային կեանքի հակաբնական պայմանները, երբ

մարդիկ զիշերը ցերեկ դարձրած, իրանց ժամանակն անց են կացնում պարահանդէսների ու քէֆերի մէջ:

Քաղաքը հեռացնելով իւր առօրեայ կեանքից ֆիզեքական աշխատանքը՝ մեծ վնաս է պատճառում օրգանիզմի բնախօսական կանոնաւոր գործունէութեան. արեան հոսանքը դէպի միւս անդամները նուազում է:

Ծնորչիւ ֆիզեքական աշխատանքի բացակայութեան և անշարժ կեանքին՝ արեան հոսանքը աւելանում է սեռական գործարանների շըրջանում:

Գրաւիչ տեսարաններ, նկարներ ու ափեղցիք խօսակցութիւններ երեակայութեան վատ ուղղութիւն են տալիս, զրգուում են կրքերը. իսկ յետոյ մինչեւ անառակութիւն միայն մի քայլ է:

Դատարկաշըջութիւնը՝ բազմաթիւ ուրիշ պատճառների հետ միասին, որոնք մարդու երեակայութիւնն ուղղուում են դէպի սեռական բաւականութեան կողմը, համարվում է մարդու անառական կրքերի զարգացման զլիաւոր գործօնը:

Եւ յիրաւի՛ սեռական յարաբերութեան ցանկութիւնն ոչ միայն զարթնում է իբրև օրգանիզմի կազմակերպութեան բնական պահանջ, այլ կարող է և առաջանալ արտաքին պատճառներից, երբ օրինակ պատահաբար մեր ուշադրութիւնը գարձնում ենք այր և կնոջ սեռական յարաբերութիւնների վերայ, անբարոյականացնող վէպեր կարդում, և կամ փողոցային տեսարաններով լի նկար-

ներ տեսնում: այս ժամանակ մեր մէջ ևս յարաբերութիւն ունենալուց անկութիւն է առաջ դալիս:

Անառակութիւնից ազատ մնալու զլիաւոր պայմաններից մէկն էլ աշխատանքն ու խելացի զուարձութիւններն են:

Բայց անառակութեան ամենազլիաւոր պատճառը թարնուած է ջղային համակարգութեան քայլայման, այսինքն՝ ջղային թուլութեան մէջ, որը ժամանակակից քաղաքակիրթ մարդու հաւատարիմ ուղեկիցն է:

Ջղերի քայլայման պատճառները բազմաթիւ են. միակերպ աշխատանք, հողեկան վրգովմնունք, նիւթականի հոգսեր (աղքանների մէջ), դատարկաշըջութիւն ու անհոգսութիւն (հարուստների մէջ), ողելից խմիչքների ու ծխախոտի գործածութիւն և այլն և այլն:

Այն ջղերը՝ որոնք մի որ և է կերպով թուլացել են, շատ հեշառութեամբ են զրգովում:

Նրանք զրկուած են լինում այն հաստատուն հողեց, որ այնքան անհրաժեշտ է անբարեյաջող ազգեցութիւններին յաղթելու համար:

Նրանք արգելը են լինում ուժեղ կամքի զարթնելուն, և սյղպիսի ջղային համակարգութիւն ունեցող մարդը գառնում է թոյլ բնաւորութեան աէր:

Իսկ թոյլ կամ անորոշ բնաւորութիւնը բազմաթիւ ախտերի հարազատ մայրն է:

Նա մարդուն գարձնում է պատահմունքի զոհ. և եթէ այդ մարդը դէպրով ընկնի լաւ շըրջանի

մէջ, իրան շատ լաւ կըպահէ, իսկ եթէ նոյն թոյլ բնաւորութեան տէր մարդը վատ ընկերների մէջ ընկնի, շատ շուտով կըդառնայ հարբեցող անառակ և դատարկապորտ:

Թոյլ բնաւորութեան հետեանքը լինումէ կատարեալ անորոշութիւն բոլոր գործերի և վարմունքների մէջ, և այդ գնասումէ թէ իրան և թէ իւր հետ մի որ և է գործ ունեցողին:

Սրտաքին տպաւորութիւնները զրգում են զգայութիւնը. թոյլ կամքը չի կարողանում կրքերը սանձահարել իսկ պոռնիկ կանայք արդէն հեշտացնում են անառակութեան զործը:

Հրապոյրն այստեղ մեծ դեր է խաղում, և հետեւմ տղամարդկանց քաղաքի փողոցներում:

Անձնավաճառ կանայք՝ շըճելով զանազան պարտէվներում, երբեմն յանդուգն կերպով և որոշ նպատակով դիմում են անց ու դարձ անող տղամարդկանց:

Զխօսելով այն դժբաղդ կանանց մասին՝ որոնք իրանց հացը ճարում են պոռնկութնամբ, կան և ուրիշ թակարդներ, որ նոյնպէս նպաստում են զգայութեան զրգումնա:

Այսպէս են օրինակ ճաշարաններն իրանց երդչուհիններով և այլն:

Նոյն իսկ մասնաւոր թատրոն ունեցողները, հասարակութիւն գրաւելու համար ներկայացնում են անբարոյական պիեսաներ:

Ապա ուրեմն կարող ենք ասել թէ զգայութիւն զրգուղ դէպքերի պակասութիւն չի զգայ-

վում: ընդհակառակն՝ այն միջավայրը, ուր ապրում ենք, և քաղաքային կեանքը լի են դրգիչներով:

Միւս կողմից ժառանգականութիւնն ու գաստիարակութիւնը առաջ են բերում թոյլ ջղերով ու թոյլ կամքով տղամարդիկ:

Այդ պատճառով տղամարդիկ շատ հեշտութեամբ անձնատուր են լինում հեշտասիրութեան ու անառակութեան:

Ժառանգականութեան ազգեցութիւնը միմիայն այն կէտի մէջ չի երեսում՝ որ երեխաները ստանում են իրանց ծնողներից վատ ջղեր. նոքա ժառանգում են ծնողների զօրացած վավաշտութիւնը:

Եթէ տմէն մի քայլափոխում տեսնում ենք հոգեկան յատկութիւնների ժառանգաբար անցումը՝ մեզ զարմանալի չպիտի թուի և այն՝ որ ծնողների սեռական յարաբերութեան անկանոնութիւնըն ևս անցնում է որդոց:

Անառակութեան պատճառների նկարագրութիւնից երեսում է, թէ այսպիսի դէպքեր բաղմաթիւ են:

Ապա ուրեմն՝ այսպիսի զօրեղ բնազդման դէմ կոռուելու համար՝ ինչպէս որ է սեռական բնազդումը, հարկաւոր է և մեծ կամքի ոյժ:

Միւս կողմից ել երիտասարդական կամքի այդ կոիւր նպաստումէ կամքի ամրանալուն:

Զգայութեան զօրացման դէմ մղած կոիւր զրում է պրօֆեսօր Ա. Միկօրսկին, և սեռական բնազդման պէս հզօր զգացում սանձահարելը շատ

զօրեղ կերպով նպաստում է կամքի զարգացման ու կազմակերպութեան:

Երեխայի կամքն ամրանում է, երբ փորձում է յաղթել կաշկանդել քաղցի, երկիւղել, բարկութեան զդացումը:

Այդ բնազդների գէմ մղած կռիւը միաժամանակ նպաստում է և նոյա կանոնաւորութեան ու կամքի զարգացման:

Մեռական զդայութեան զարգացման ժամանակ՝ կամքի զօրացման վարժութեան համար մի նոր ասպարէզ է բացվում—այն է կռուել զդայութեան գէմ:

Այդ կռիւը հնարովի, տեսական կամ արուեստական մի բան չէ. ոչ դա բնական երեցիթ է, որ կախումն ունի բնութիւնից և մարդու կանոնաւոր զարգացման արտայայտութիւնն է:

Երիտասարդի կանոնաւոր զարգացման ժամանակ ամսյայանի երեան է զալիս այդ կռուի ոյժը:

Մարդու բարոյական զարգացման և կատարելութեան համար այդ կռիւն անհրաժեշտ է. նա չափաւորում է սեռական բնագիտումը, նպաստում է ալտրուիզմի զարգացման, մարդկային բնութեան ստոր երեցիթներն ոչնչացնում, ու նրան հասցնում է կատարելութեան:

Բացի զրանից՝ նա բարելաւում է երկու սեռի յարաբերութիւնը, և հասցնում է այն բարձրութեան, որ ապահովում է կանանց իրաւունքների և մարդկութեան պահպանումը:

Եթէ այդ կռիւն ուժեղ ու երկարաւել չէ ե-

զել, երբ և իցէ անպատճառ կարտայայտուի տղամարդու բնաւորութեան մէջ թողնելով մի կոպիտ զդայութիւն, որ կը դարձնէ նրան և անժուժկալ և յամառ, ու միշտ կը դառնայ ամուսինների խոռվութեան աղքիւր:

Իսկական ամուսնական երջանկութեան հասնելու, այսինքն՝ կը երից ազատ լինելու համար, երիտասարդը շատ կանուխ պէտք է սովորի սանձաշարել իւր սեռական զդայութիւնը:

Այս բոլորը՝ ինչ որ ասում է պրօֆեսոր Սիկորսկին, շատ ճշմարիտ է, և հաստատվում է կեանքի առօրեայ երեցիթներով. բնտանեկան երջանկութիւնը միայն նրանք են վայելում, որոնք մինչև ամուսնանալը յաղթում են իրանց սեռական կրքերին, և այնպէս են ամուսնանում:

Իսկ ընդհակառակը մինչև ամուսնութիւնը եղած սեռական սանձարձակութիւնը քայլեայում է ամուսնական երջանկութիւնը:

Բ.

Կեանքի կանոնաւոր պայմաններում, երբ բոլոր գործարաններն հաւասարաշափ են աշխատում, երբ լաւ սնունդի հետ մարդս պարապում է նշնպէս Փիղերական աշխատանքով սերմի աճումը շատ զանգաղ է առաջ գնում:

Իսկ լաւ սնունդի ու բոլոր գործարանների անհաւասար աշխատանքի ժամանակ՝ սերմի աճելը շատ արագ է կատարվում:

Այս նկատողութիւնը վերաբերում է անհասաի կեանքի այն ժամանակամիջոցին, երբ նորա օրդաններն արդէն կատարեալ զարգացման մէջ են:

Իսկ մինչև այդ ժամանակ թշյլ ջղերով մարդկանց սեռական պահանջը սուր կերպարանք է ստանում:

Սեռական պահանջի կանոնաւորութեան համար մարդս պէտք է հեռացնէ այն բոլոր պատճառները, որոնք առիթ են տալիս սեռական գործարանների ուժեղ գործունէութեան:

Այս տեսակիտից պէտք է զգուշանալ աւելորդ կերակուր գործածել ոգելից ըմպելիքներ խմել դատարկ շրջել, նստակեաց կեանք վարել և այլն և այլն:

Իսկ բաց օգում աշխատելը, լողալը, ման գալը՝ այդ բոլորը պակասեցնում են սեռական բնաղդի ցմբը:

Քնելուց առաջ չպէտք է ուտել կամ խմել որովհետեւ դա ևս խանգարում է սեռական գործարանների կանոնաւոր ընթացքը:

Պէտք է քնել կոշտ անկողնի վերայ, մանաւանդ ամսուր, և երբեք չպէտք է ծածկուել տաք վերմակով:

Սեռական գործարանների զրգուման արտաքին պատճառներն աւելի բարդ ու բազմակողմանի են:

Բացի զրանից՝ մարդու անհատական ու հասարակական կեանքի կանոնաւոր ընթացքում արտաքին տպաւորութիւններն ոչ մի ազդեցութիւն չպիտի ունենան սեռական պահանջի զարգացման ու գորանալուն վերայ:

Մինչդեռ ապացուցուած է թէ մարդու սեռական ձգտութիւնների ոյժն աւելի մեծ կախումն ունի հոգեկան, քան թէ բնախօսական պատճառներից:

Եւ այս պարագան բարեյաջող հանդամանքներում կարող է մեծ օգուտ տալ մարդուս. նա կարող է կանոնաւորել սեռական բնաղդը:

Դարձեալ պէտք է հեռացնել այն բոլոր վատթար տպաւորութիւնները, որոնք նպաստում են զգայութեան գրգուման:

Այս նպատակով պէտք է ընթերցանութեան դրբերի մէջ խիստ ընտրութիւն անել, պէտք է խուսափել անբարոյական նկարներ ու տեսարաններ գիտելուց և այլն:

Բայց մենք որքան էլ եռանդով աշխատենք հեռացնելու այն առարկաները, որ նպաստում են սեռական զգայութեան գրգուման, մեզ դարձեալ չի յաջողուիլ որովհետեւ կեանքի ընթացքն այնպէս է, որ գրեթէ անկարելի է խուսափել:

Ապա ուրեմն՝ անառակութեան դէմ կուռելու համար պէտք է ուրիշ միջոցներ փնտոել:

Այստեղ շատ մեծ ծառայութիւն կարող է մատուցանել գիտութիւնն ու կամքը:

Մեր կարծիքով զիտութիւնը կարող է շատ նպաստել սեռական յարաբերութեան կանոնաւորութեան:

Բայց որպէս զի նոքա ազդեն մարդու բարքի վերայ, անհրաժեշտ է որ մարդիկ իւրացնեն և զգան նորա օգուտները:

Սիայն գիտութիւններով կարելի է կռուել
սեռական պահանջի գրգռման դէմ:

Այն գիտութիւնները՝ որոնք մարդու մէջ մար-
մին և արիւն չեն դարձել այլ ձեռք են բերուած
պատահաբար, շատ շուտ մոռացվում են, հէնց այն
բոպէին՝ երբ ամէնից աւելի անհրաժեշտ են:

Եւ ահա դոքա զոհ են դառնում նախապա-
շարումների և տեղի են տալիս սեռական գրգռման:

Բոլորովին ուրիշ է այն գիտութիւնների դե-
րը, որոնք մարմին ու արիւն են դարձել և որոնց
համար մարդս շատ աշխատել է գիտակցաբար
իւրացնել, և դարձել է կարծես իւր անձնական
առաւելութիւններից մէկը:

Այսպիսի գիտութիւններն երբեք չեն մոռա-
ցուիլ, և կընպատեն մարդու բարք ու վարքի կա-
նոնաւորութեան:

Ահա հէնց այդ գիտութիւնները մեծ դեր են
խաղում սեռական պահանջների կանոնաւորու-
թեան մէջ:

Այս պատճառով չափազանց անհրաժեշտ է
ձեռք բերել ժամանակին ճշմարիտ տեղեկութիւն-
ներ սեռական պահանջի մասին, և անխոտոր հե-
տեւել անհատական կեանքի այս նշանաւոր դոր-
ծողութեան մէջ՝ գիտութեան ու բարոյականու-
թեան ցուցմունքներին:

Ի հարկէ՝ հասանալի է թէ հասարակական
բարոյականութեան այժմեան դրութեան շնորհիւ՝
գիտութեան ցուցումները կեանքում գործադրելու
համար հարկաւոր է զօրեղ կամք:

Այժմ իսկ կեանքի ամրողջ ընթացքը, առանձ-
նապէս քաղաքային կեանքը՝ հակասում է բարոյա-
կանութեան ամենատարրական պահանջներին:

Այս հակասութիւններից շատերը՝ առանձ-
նապէս սեռական յարաբերութիւնների նկատմամբ
եղածները, շատ վաղուց գոյութիւն ունին, և
մարդկանց տգիտութեան պատճառով դեռ ևս
գործադրութեան մէջ են:

Մեր զարգացման ստոր մակերեսյթի շնորհիւ՝
շատ ժուժկալ տղամարդիկ դաղտնի են պահում
իրանց վարքն ու բարքը:

Նոքա վախենում են, որ իրանց բարոյական
մաքրութիւնը ծաղըի առարկայ դառնայ, և կամ
վերագրուի ոչ թէ այն բանին, որ ամուսնութիւ-
նից դուրս եղած սեռական յարաբերութիւնն ան-
բարոյականութիւն են համարում; այլ վախկու-
թեան, վարակման երկիւղի և կամ թէ մի ուրիշ
անմիտ պատճառի:

Մեր հասարակութիւնն այնքան սովորել է
տղամարդկանց սեռական սանձարձակութեան, որ
անարատ տղամարդկանց համարում են սեռական
անկանոնութեան զոհ...:

Մեր զարգացման այս ամենաստոր ըրջանում
անարատ տղամարդը պէտք է ունենայ շատ ու-
ժեղ կամք, որպէս զի կարողանայ կեանքի մէջ մըտ-
ցնել իւր գիտնական ճիշտ հայեացքները սեռական
պահանջի մասին:

Նա պէտք է կռուի ոչ միայն գայթակղութեան,
այլ և հասարակութեան նեխուած միջավայրի պէմ:

Այդ ձնշմանը գիմալրելու համար Հարկաւոր
է ուժեղ կամք:

Բացի գրանից՝ անառակութեան դէմ կուտելու
համար մարդս պէտք է կարողանայ սանձահարել
իւր երեակայութիւնը:

Եւ իսկապէս սեռական պահանջի զգացման
ժամանակ երեակայութիւնը մեծ զեր է խաղում:

Պատահմամբ աչքի ընկնող հրապուրիչ նկարը
հարուածում է մեր միտքը, և երեակայութիւնն
առաջ է բերում հեշտասիրական պատկերներ:

Եւ մեր ուշաղութիւնը նոքա ակամայ զրա-
ւում են:

Ուղեղը զբաղուած լինելով հեշտասիրական
երազներով՝ պատճառ է դառնում արեան դէպի
սեռական անդամները հոսելուն և մեր թմրած սե-
ռական զգայութեան զրգութելուն:

Եյս իսկ պատճառով սեռական պահանջը կա-
նոնաւորելու համար պէտք է իշխենք մեր երեա-
կայութեան վերայ:

Դա մեծ նշանակութիւն ունի ոչ միայն այս
այլ և ուրիշ շատ դէպերում:

«Ով իր երեակայութեան տէրն է, — ասում է
մի գիտնական, կարողանում է ուղղել նրան ուր
և լինի ու ձգտում է հասկանալ իրերի իսկական
դրութիւնը՝ քննելով նոյա ամէն կողմից, այնպի-
սին անպատճառ ինքն է իր անձի տէրը. այս պա-
րագան հօգեկան մեծ յատկութիւնների ու բարու-
թեան աղքիւր է և միանդամայն մարդկութեան
ամուր պատուանդան:

Իսկ ընդհակառակը՝ անուշագրութիւնն ու
անհրադութիւնը բազմաթիւ ախտերի պատճառ են
լինում:

Եյս բոլորովին ձշմարիտ է: Երեակայութեան
վերայ իշխելու կարողութիւնը ձեռք է բերվում
ուսումնարանական կեանքում կանոնաւոր վարժու-
թիւններով:

Իսկ ով որ պատանի ժամանակ ձեռք չէ բե-
րել այդ սիմբոլ պէտք է աշխատի անշուշտ ձեռք բե-
րել աւելի ուշ:

Վերջապէս սեռական պահանջի կանոնաւորու-
թեան համար կայ և մի ուրիշ գեղեցիկ միջոց, այդ
կրթութիւնն է, կամ աւելի ձիշ՝ ինքնակրթու-
թիւնը:

Թ.

Մարդուս յատուկ է գիտութիւններ ձեռք
բերելու ձգտումը:

Բայց բազմաթիւ պատճառների շնորհիւ շատ
մարդկանց մտաւոր կրթութիւնը սահմանափակ է.
մինչդեռ բնական հետաքրքրութեան գոհացում տա-
լը ոչ միայն բազմաթիւ օդտակար ու գեղեցիկ
զուարձութիւններ է պատճառում մեզ, այլ և
նպաստում է անհատի բարոյական կատարելա-
զործութեան:

Ընթերցանութիւնն ոչ միայն մարդուն հար-
ստացնում է գիտութիւններով, այլ և կողմանակի
կերպով հեռացնում է միջավայրի աղղեցութիւնը,
որ մեծ մասամբ վատ է լինում:

Նոյն ընթերցանութիւնը կարձացնում է այն ժամանակը, որ պէտք է զործադրենք անօգուտ կերպով մարդկանց հետ յարաբերութիւն ունենալու համար:

Անառակութիւնը վնասում է թէ՛ հասարակութեան և թէ տէրութեան. դրա համար նոքա պէտք է աշխատեն արմատախիլ անել այս ախտը:

Հասարակութեան ու պէտութեան միջամտութիւնը սեռական մերձաւորութեան խնդրի մէջ անհրաժեշտ է հետեւեալ տեսակէտից:

Սուաջին. անառակութիւնը կապուած է զանազան հիւանդութիւնների և զլխաւորապէս սիֆիլիսի տարածման հետ: Այս սարսափելի հիւանդութիւնից կարող են տանջուել ոչ միայն անմիջապէս իրանք՝ անառակները, այլ և հասարակութեան բարյական անդամները. և նոյն իսկ երեխաները, որովհետեւ սիֆիլիսը տարածվումէ նոյնպէս սեռական յարաբերութիւնից դուրս և ուրիշ ձանապարհներով:

Երկրորդ. հասարակութեան բարյական և անարատ անդամները՝ շնորհիւ միւս անդամների անառակութեան, ծախսերի տակ են ընկնում, հեւանդանոցների, բժիշկների ու ապաստարանների պահպանութեան համար: Այդ ծախսերը բարյական մարդկանց համար շատ ծանր են և բոլորովին անարդարացի:

Երրորդ. մեր հասարակական կեանքը, մանաւանդ քաղաքներում, այնքան շատ հրապոյրներ

ունի, որ մարդուս խանգարում է կռուելու սեռական պահանջի բնազգման հետ:

Այս հրապոյրներն հեռացնելով, շատ կը հշտանար սեռական պահանջի կանոնաւորութեան գործը. բայց դա միայն մի մարդ անկարող է անել. այդ կարող է անել միայն հասարակութիւնը կամ պետութիւնը:

Եւ վերջապէս չորրորդ՝ մեր մի քանի հասարակական հիմնարկութիւնների պակասութիւնները շատ նպաստում են պոռնկութեան զարգացման: Այսպէս օրինակ աղջիկների ապաստարանները իրանց որբերին արձակում են 18—20 տարեկան հասակում, թողնում են նրանց ձակատագրի կամքին, և ոչ մի միջոց ձեռք չեն առնում նոցա ապագայ կեանքի համար, որով կողմակի կերպով նպաստում են անառակութեան:

Ժ.

Վերջիշեալ պատճառների հիման վերայ՝ հասարակութիւնն ու պեառութիւնը պէտք է ձեռք առնեն զանազան միջոցներ բարյականութեան պահպանման և իրանց անդամների առողջութեան համար, և պէտք է արմատախիլ անեն այն բոլորը՝ ինչ որ անառակութեան առիթ է տալիս:

Այդ նպաստակով շատ ցանկալի է կազմակերպել զիանական — գործնական յատուկ ընկերութիւններ անբարյականութեան գէմ կռուելու համար:

Մի այսպիսի ընկերութիւն պէտք է զբաղուի սեռական յարաբերութիւնների ուսումնասիրութեան խնդրով. պէտք է քննէ բազմակողմանի կերպով պոռնկութեան պատճառները, և աշխատի նոցա ոչնչացնել. պէտք է տարածէ ուղեղ գիտնական տեղեկութիւններ սեռական պահանջի մասին. պէտք է յարաբերութիւն ունենայ պետական հիմնարկութիւնների հետ այնպիսի հարցերի մասին. ուր անհրաժեշտ է պետական միջամտութիւնն և այլն:

Մի խօսքով՝ մի այսպիսի ընկերութիւն ահագին աշխատանք կարող է ունենալ:

Ի հարկէ դրա համար էլ հարկաւոր են համապատասխան աշխատաւորներ:

Բայց մեծ քաղաքներում՝ որտեղ առանձնապէս զգացվում է այսպիսի ընկերութիւնների կարևորութիւն, անտարտակցյա մարդկանց պակասութիւն չի զգացուիլ:

Դործի յաջողութեան համար այսպիսի ընկերութիւններ կարելի էր հիմնել ժումկալութեան ընկերութիւններին կից, որ դժբախտաբար շատքիչ է տարածուած:

«Ընկերութեան խնդիրները կարձառօս կերպով այսպէս պէտք է ձեակերպել. առաջին՝ ընկերութիւնը պէտք է աշխատի, որքան կարելի է, դժբախտ կանանց անկման առաջն առնել՝ ժամանակին օգնելով նոցա. երկրորդ՝ պէտք է օգնէ և պաշտպանէ այն ընկած կանանց, որոնք ցանկանում են թողնել իրանց անբարոյական արհեստար

և նորից պատառաւոր աշխատանքով պարապել: Հասարակութիւնը խեղջ կանանց պէտք է պաշտպանէ տնտեսական միջոցներով. ա. պէտք է բաց անէ աշխատանքի զրասենեակ թէ՛ ինտելիգէնտ կանանց համար, որոնք աշխատանք են որոնում, և թէ հասարակ բանւոր կանանց համար—կար կարողների, աղախինների, խոհարարների և այլն,—որոնք մի պատճառով զրկուել են աշխատանքից. և վերջապէս ապրելու միջոց պէտք է տայ այն կանանց, որոնք բանաից կամ հիւանդանոցներից և այն նոր են դուրս եկել:

Ընկերութիւնը՝ կարող է դիտել արհեստանոցներում, լուսացանոցներում, գործարաններում և ուրիշ հիմնարկութիւնների մէջ աշխատող կանանց կեանք՝ համոզուելու համար թէ ի՞նչպէս են ապրում, և երբ նկատէ որ անկման ձանապարհի վերայ են գոնզում, իւր բոլոր ոյժով աշխատի նոցա անկման առաջն առնել, մինչեւ իսկ դատի ենթարկել հրապուրող աղամարգկանց:

Ընկերութիւնը գատարանի միջոցով կարող է պատժել այն անառակ տղամարդկանց, որոնք հրապուրելով օրիորդ կ ոմ կին, ապրում են հետները, երեխաներ են ունենում, և ապա թողնում են նոցա ձակատագրի կամքին, մինչեւ իսկ նիւթապէս անապահով վլճակի մէջ, որով պատճառ են լինում նոցա պոռնկութեան զոհ դառնալուն:

Ընկերութիւնը նոյն գատարանի միջոցով պէտք է պաշտպանէ այն օրիորդներին, որոնց

փճացնում և շահագործում են իրանց ծնողները
և նյոյն իսկ մայրերը՝ տակաւին մատաղ հասակում»:

Այս է կազմանի գժբախտ կանանց օգնելու ըն-
կերութեան ծրագիրը:

Ցանկալի է որ ամէն մի քաղաքում կազմուէր
այսպիսի ընկերութիւն:

Ի հարկէ մարդասիրական ընկերութիւնները
չեն կարող արմատախիլ անել անառակութիւնը,
բայց յամենայն դէպս շատ օգտակար են:

Նատ լաւ կը լինէր, եթէ այդ ընկերութիւն-
ները հիմնէին գրագարաններ, ժողովրդական թատ-
րոններ և ժողովարաններ:

Արևմտեան Եւրոպայի մարդասէրների գոր-
ծունէութիւնը, որոնք կովում են անառակութեան
դէմ, ցցց է տալիս թէ այն ժողովարանները՝ որ-
տեղ հաւաքվում է տօն օրերին երկու սեռի երի-
տասարդութիւնն ընթերյանութեան, երդեցողու-
թեան և առհասարակ բարոյական զուարձութիւն-
ների համար, շատ նպաստում են անառակու-
թեան արմատախիլ լինելուն:

Քաղաքային վարչութիւնները նոյնպէս կա-
րող են կռու ել անբարոյականութեան դէմ, և շատ
բան կարող են անել:

Ամէնից առաջ նոքա աղքատ աղջիկների հա-
մար կարող են հիմնել արհեստի գպրոցներ, և այդ
ուսումնարաններն կամ մի քանի ուսումնարաններ
միասին վերցրած՝ պէտք է ունենան մի հոգաբար-
ձութիւն, որի նպատակն պիտի լինի աղջիկներին
գործ գտնել ուսումնարանից գուրս գալուց յետոյ:

Այժմ շատ աղջիկներ ուսումնարան աւար-
տելուց յետոյ ոչ մի գործ չեն գանում, և պոռն-
կութեան վոհ են լինում:

Բացի գրանից՝ քաղաքային ինքնավարութիւ-
նը պէտք է ժողովրդի համար կազմակերպէ զանա-
զան խելացի զուարձութիւններ, հիմնէ գրագարան-
ներ ու ընթերյարաններ:

Արտասահմանում այս խնդրի վերաբերմամբ
արդէն շատ բան է կատարուած:

Լոնդոնում, Թրեգգենում և մի քանի ուրիշ
քաղաքներում զոյութիւն ունին ժողովրդական
պալատներ, որտեղ լինում էն հրապարակական ըն-
թերյանութիւն, համերգներ, երաժշտական երե-
կոյթներ և այլն:

Այս բոլորը մեծ գաստիարակչական նշանա-
կութիւն ունի. հասարակ ժողովուրդը շրաթ-
ուաց միակերպ աշխատանքից յետոյ՝ տօն օրերին
հաւաքուելով այդ պալատներում, ոչ միայն հածելի
ու օգտակար կերպով զուարձանումէ, այլ և ձեռք
է բերում կարևոր զիտութիւններ:

Այդ հիմնարկութիւնները շատ օգտակար են
անառակութեան դէմ կռուելու տեսակէտից. նոքա
մեր ուշագրութիւնը հեռացնում են հետախրա-
կան մտքերից, և առհասարակ աղնուացնում են
մարդկանց:

Նոյնպէս ժողովրդի համար մեծ գաստիարակ-
չական նշանակութիւն ունին թանգարաններում
եղած նկարները:

Այսպիսի նկարներ զիտելը (ի հարկէ նոցա

մէջ չպէտք է անբարյական բնաւորութիւն ու-
նեցող նկարներ լինին) մեծ հաճոյք է պատճա-
ռում մարդկանց. նա բարձրացնում է մարդուս
հոգին, և կանոնաւորում ջղային համակարգու-
թիւնը:

Մի քանի բժիշկ-հոգեբաններ պնդում են, թէ
ոչ մի բան այնքան զօրաւոր կերպով չի նպաստում
հոգեկան ուժերի վերականգնման, որքան գեղար-
ուեստական բաւականութիւնը:

«Թանգարաններում, մասնաւոր մարդկանց հա-
ւաքածուներում, թատրոններում և լսարաններում
ժողովուած նկարները, նոյնպէս և հարիւր հա-
զարաւոր զրբերի մէջ նկարուած գեղարուեստա-
կան հարստութիւնները—ասում է մի զրոյ—շատ
բարերար աղբեցութիւն են անում հարիւր հա-
զարաւոր մարդկանց վերայ, բարձրացնում են նո-
ցա հոգեպէս, մոռանալ են տալիս առօրեայ կեան-
քի մանր հաշխեներն ու կեղտերը, և դրզում դէպի
բարձրագոյն իգէալ:

Հասարակ անձնաւորութիւնը ծանօթանալով
գեղարուեստի արտագրութիւնների հետ՝ մարդ է
զառնում: ինչ որ անասնական է ոչնչանում է, և
մարդուս դործերի որոշողը դառնում է աստուա-
ծային ոյժը—իգէալը»:

Քաղաքային վարչութիւնները հիֆնելով գեղ-
արուեստական թանգարաններ՝ մեծ ծառայութիւն
մատուցած կրկնին հասարակութեան, և նպաս-
տած նրա բարյական զարգացման:

ԺԱ.

Բայց պետութիւնն ու հասարակութիւնը ա-
աւելի շատ միջոցներ ունին անառակութեան դէմ
կոռուելու համար:

Նոքա ամենից առաջ պէտք է աշխատեն ար-
մատախիլ անելու այն բոլոր պատճառները, որոնք
ստիպում են կանանց պոռնկութեամբ պարապելու,
իսկ տղամարդկանց—օդուելու:

Կանանց պոռնկութեամբ պարապելու զլիա-
ւոր պատճառը նոյա աղքատութիւնն ու տգի-
տութիւնն է:

Պատաշում են նոյնպէս 13 — 14 տարեկան
աղջիկներ, որոնք անդիտակցաբար աղմի մէջ են
ընկնում:

Բայց թողնելով այդ յանցաւոր դէպքերը՝
կը տեսնենք, որ կանայք մտնում են պոռնկանոց
ընդհանրապէս կարիքից ստիպուած:

Ծածուկ պոռնկութիւնը զլիաւորապէս ծաղ-
կում է շնորհիւ աղքատութեան. գերձակ կանայք,
ստիտակեղէն կարողներ և այլն մեծ մասամբ իրանց
աշխատանքի փոխարէն այնպիսի չնչին վարձա-
րութիւն են ստանուած, որ համարեա քաղցած
են անցկացնում իրանց օրերը, ուստի և դիմում
են անառակութեան:

Ի հարկէ կան և ուրիշ բազմաթիւ պատճառ-
ներ, որոնք նոյնպէս ստիպում են կանանց բոլ-
ութեամբ պարապելու, բայց նոքա այնպիսի մեծ
աղդեցութիւն չունին, ինչպէս կարիքը:

Իսկ եթէ ինչն է ստիպում աղամարդիանց
անառակաւթեամբ պարագելու՝ զրա մասին արդէն
խօսեցանք:

Աշխատաւոր կանանց նիւթական գրութիւնը
բարոքելու համար՝ ինչպէս զործարաններում, նյոն-
պէս և արհեստանոցներում, պետութիւնը պէտք
է հիմնէ առանձին զործարանական հոգաբարձու-
թիւն, որը և պէտք է ուսումնասիրէ կանանց աշ-
խատանքի գրութիւնը ամէն տեսակ զործի մէջ, և
որոշէ նոցա վարձարութեան չափը:

Բացի զրանից՝ հոգաբարձութիւնը պէտք է
կանոնաւորէ զործարանասիրոջ ու աշխատաւոր
կանանց յարաբերութիւնը, և խիստ հետեւի:

Առելի լաւ է վերահսկողներ ընարել նոյն իսկ
կանանց միջից:

Ոստիկանութիւնը կարող է նոյնպէս մեծ ծա-
ռայութիւն անել՝ կռուելով անառակութեան զէմ:
Նա կարող է ոչնչացնել «կենդանի ապրանքի» առ-
ետուրը, և դիմագրել բողնոցների բազմանալուն:

Նա կարող է նոյնպէս խառնուել տանտիրու-
հու և պոռնիկ կանանց յարաբերութիւնների մէջ:
Սյսպէս օրինակ. Օրլովի ստիկանապետը անշուշտ
բազմաթիւ կանանց մեծ ծառայութիւն արաւ-
կախելով հասարակաց տներում հետեւալ հրա-
մանը:

«Հասարակաց տներում ապրող կանայք վա-
խենում են թողնելու իրանց ստոր պարագմունքը,
երբ բողնոց պահողնեն պարտք են լինում, և ա-
ղատօրէն աշխատելու:

Երբ մի կին կամենայ այնտեղից գուրս գալ,
տանտիրուհին ասումէ, «մինչեւ պարտք չվճարես,
չեմ թողնիլ»:

Երբ տանտիրուհին մի այդպիսի բան ասէ,
չպէտք է հաւաաալ:

Ամէն մի կին, ամէն ժամանակ՝ ինչքան էլ
պարտք ունենայ, կարող է գուրս գալ հասարա-
կաց տնից:

Երբ տանտիրուհին ասէ՝ թէ չի թողնիլ, և
հեռանալ ցանկացողի շորերը զրաւէ, որ կարել
է տուել պարտքով կնոջ հաշումն, այդ ևս սուտ
է. տանտիրուհին իրաւունք չունի կնոջ շորերը
յափշտակելու և այնպէս արձակելու:

Եթէ կինը պարտական է տանտիրուհուն,
կարող է գաաարանի միջոցով ստանալ իւր առ-
նելիքը, իսկ երբ ինքը՝ հակառակ կնոջ կամքին,
նրան սկահումէ, և կամ նրա շորերն է առնում
պարտքի տեղ, այդպիսին ինքնիշխան վարմունքի
համար օրէնքով պատժվումէ:

Սրանով յայտարարվումէ հասարակաց տնե-
րում ապրող կանանց, որ նոքա միշտ կարող են
հեռանալ այնտեղից, և տանտիրուհին չի կարող
երբեք արգելել նրանց թէկուզ ամբողջովին պարտ-
քի մէջ լինին:

Իսկ եթէ տանտիրուհին արգելէ կամ պարտ-
քով վախեցնէ, այն ժամանակ կինը կարող է զի-
մել ոստիկանութեան, վստահ լինելով՝ որ անպատ-
ճառ օգնութիւն կը գտնէ:

Պոռնկութիւնը մեծ մեղք է, և եթէ մի կին

ուղումէ ազատուել, նրան ոչ ոք չի կարող արգելել և չպէտք է խանդարի:

Եթէ օրիորդներն ուղումէն ապրել այնտեղ, կարող են, իսկ եթէ ոչ կարող են հեռանալ:

Այս յայտարարութիւնը պէտք է կախել Օրլով քաղաքի բոլոր հասարակաց աներում, բոլոր սենեակներում: որպէս զի այնտեղ ապրող աղջիկներն իմանան, թէ իրանց տանտիրուհին չպէտք է համարձակուի նոցա ոչ պարագի և ոչ մի ուրիշ պատճառով պահել»:

Եթէ այս յայտարարութիւնը կախուած լինէր բոլոր քաղաքների հասարակաց աներում, այն ժանանակ շատ պոռնիկ կանայք կրթողնէին իրանց ամօթալի պարապմունքը:

Պետութիւնը նցնպէս կարող է կռուել անառակութեան դէմ, և բազմաթիւ միջոցներ գործադրել:

Նա կարող է հիմնել կանանց արշեստի ուսումնարաններ, զանազան խելացի պարապմունքներ, գեղարուեստական թանգարաններ և այլն. միենայնը՝ ինչ որ կարող են անել քաղաքային վարչութիւնները՝ միայն աւելի մեծ չափով:

Մենք տեսանք թէ ի՞նչ բարերար ազգեցութիւն ունին նկարները մարդկանց վերայ. նոյնը կարելի է տաել և զրբերի մասին:

Բայց միւս կողմից ինչպէս նկարները՝ նոյնպէս էլ զրբերը կարող են նպաստել անառակութեան զարգացման — այդ կախուած է նոցա բովանդակութիւնից. նկարների ու զրբերի փայտայնող

ազգեցութիւնը թուլացնելու հասար կարելի է արգելել նոցա տպագրութիւնը:

Մենք զիտմամբ գործածեցինք «թուլացնել» խօսքը, որովհետեւ չնայելով արգելման, դարձեալ բազմաթիւ վավաշոտ գրքեր ու նկարներ հանդիպում են հասարակութեան մէջ:

Պետութիւնը կարող է նոյնպէս արգելել անբարցյական պիեսաների ներկայացումը:

Անառակութիւնը արմատախիլ անելու համար իսկապէս յատուկ միջոցներ չկան:

Նա մարգուս բնութեան օրէնքներից խոտորելու արտայայտութիւնն է:

Այն բոլոր թէ՛ անհատական, թէ հասարակական և թէ վարչական միջոցները, որոնք նպաստում են անհատի բազմակողմանի ու բնութեան օրէնքների համաձայն զարգացման, այդ բոլորը նպաստում են նաև անառակութեան, ինչպէս և միւս ախտերի — հարբեցողութեան, ծխելուն, շատակերութեան և այլն — արմատախիլ անելուն:

Հասարակական ու վարչական միջոցները, որուղղուած են անառակութեան դէմ, պէտք է հետեւալներն լինին. կանանց անտեսական գրութիւնը բարեւոքել, կրթութիւն տարածել, աղնուացնել հասարակաց բարոյականութիւնը, հեռացնել այն ընդհանուր պատճառները, որոնք նպաստում են վավաշոտութեան զարգացման:

Այն ծախքերը՝ որ պահանջում են այդ միջոցները, իրանց արդիւնքով լիովին կարգանան, նոցա շնորհիւ կոնչանայ այն ապարդիւն ծախքը,

որ գործադրվում է սիֆիլիտիկների համար հիւանդանոց շինելու աշխատանքի արտադրութիւնը կրշտանայ, յանցաւորների թիւը կրպակասի և այլն:

Անառակութիւնը ամէն տեղ արմատացել է:
Բայց յաւալին այն է մանաւանդ՝ որ նա բուն է զրել նաև մեր զիւղական առողջ նահապետական ընտանիքներում: Հողի ու փողի պահառւթեան պատճառով զիւղական առողջակալմ սերունդը հետզհետէ զիւղեց հեռանում ու պանդիստում է մեծամեծ քաղաքներում, ուր բարոյապէս ու փիզիքապէս ապականուելուց յետոյ՝ վերագառնում է տուն, և նոյն ապականութիւնը, նոյն վատ յատկութիւնները իւր շուրջը տարածում, և անմեղ ու անարատ սերնդի փձանալուն պատճառ գառնում:

Ո՞քան մեծ քարերարութիւն արած կրլինէին մեր հարուստները, եթէ քանի ժամանակը ներում է, հողեր ձեռք բերէին և անհող զիւղացիներին մշակելու հողեր տային. զրանով թէ իրենց օգուտ բերած կրլինէին, եթէ զիւղական չքաւոր դասակարգինք ու միտնդամայն անառակութեան տարածման առաջն առած:

Անառակութիւնը մարդուս բնութեան հետ կարծես թէ սերա կերպով կապուել է:

Այս պատճառով հարց է ծագում, թէ կարելի է արգեօք նրան ոչնչացնել:

Անառակութիւնը ստեղծուել ու պահպանվում է տղիտութեան, անտեսական, կանանց ստր-

կութեան, կեանքի հակաբնական պայմանների շնորհիւ:

Բայց այժմ՝ երբ զիտութիւնը շատ մեծ յառաջադիմութիւն է արել, և տարածվում աւելի լայնածաւալ կերպով և մարդկութիւնն արդէն սկսում է ապրել զիտակցաբար, պէտք է ենթագրել թէ անառակութիւնն ես օրէցօր կրպակասի:

Պէտք է միայն ժամանակի ոգուն համապատասխան կազմակերպուած ուսումնարաններ հիմնել:

Մեղ հարկաւոր է լսու և միայն լսու....



1185

2r

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0072411

